

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

396  
4-58

1926 p.




0120-10

396

Ա-58

ՀԿԿ (Բ) ԱՌԴՔՅԵՐԿԱՆՈՒՄ ԱՇԽԱՏ. ՅԵՎ. ԳԵՂՋԻ. ԲՈՒԺԻՆ




320

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

## ԱՌԻԱՏԱՎՈՐՈՒՅԻՒ

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԱՐՏԻ 8-Ի 5-ՐԴ ՏԱՐԵ-  
ԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ



ՀՐԱՄԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԹԻՎԻ Ն Ա Յ Ա  
1926

113 FEB 2013

55.781

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա ժողովածուն նպատակ ունի ԱՍՖԻՆ մեջ աշխատավոր կանանց դրությունը լուսաբանող նյութ տալ կանանց մեջ աշխատանք վարող ակտիվին:

Պրոֆմիություններում, Խորհուրդներում, կոռպերացիայում, Կոմկուսակցության, Կոմյերիտմիության, պիոներական շարժման մեջ վերջին տարիներս կնոջ անցած ուղին, կանանց գործազրկության դեմ ուղղված պայքարը, նրանց կենցաղային և իրավական դրության բարելավման միջոցները, նմանապես և կուսակցության մերձակա խընդիրներն Անդրկովկասի աշխատավորուհիների մեջ կատարելիք աշխատանքի վերաբերմամբ—ահա այն նյութը, վորուղեցին տալ ընթերցողին ներկա ժողովածուի կազմողները:

ԱՍՖԻՆ հանրապետության մեջ խորհրդային շինարարության մեջ հետաքրքրուղ զանազան բնագավառներում կնոջ դրության հաշվեհարդարը տվող նյութերի բացակայությունը, նմանապես և մի քանի հոդվածների ուշ ստացումը զրկեցին մեզ հնարավորությունից ավելի խնամքով վերաբերվելու ժողովածուի բավարարությանը (նյութերի լրությանը, զանազան հռչակածների լոնդորկած ժամանակացրջանի միությանը) և նեղին (կերպով վոչ բոլոր հոդվածներում հավասարապես մատչելի յեւ միջակ կուսակցական և հասարակական աշխատավորին):

Այսուամենայնիվ, յեթե ներկա ժողովածուն ընկերներին հնարավորություն կտա փոքր ինչ ընդլայնելու և



Կ3501. 63

Թիֆլիս, տպարան «Զարյա»-ի, Ա. Մարտիրոսյանի փող  
Պատվիր № 1173 = Գլավլիս № 312 = Տիբաժ 3090

Խորացնելու իրենց ունեցած տեղեկությունների պաշարը  
ինչպես սրա հետ անմիջականորեն ծանոթանալիս, այն-  
պես և Մարտի 8-ի կամպանիան անցկացնելիս, ապա Աշ-  
խատավորուհիների և Գեղջկուհիների Բաժինը իրեն հա-  
սած կհամարի իր նպատակին, վորի համար նա հրատա-  
րակում և այս ժողովածուն իբրև լրացուցիչ նյութ այն  
հրատարակություններին, վոր լույս և ընծայել Մարտի  
8-ի առիթով Համ. Կոմ. Կուս. Կենտ. Կոմ. Աշխատավո-  
րուհիների և Գեղջկուհիների Բաժինը ԱՍՖԽՀ վերա-  
բերմամբ:

Կուս. (ք.) Ա. Եղրկ. Յերկ. Կոմ. Աշխատա-  
վորուհիների յեզ Գեղջկուհիների Բաժին

Թիֆլիս  
20.11.26 թ.

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՇՐՋԱ-  
ՆՈՒՄ Կ.Ս.Տ.Ր.Վ.Պ. ԱՇԽԱՏԱՎԻՔԻ ԿՇԱՆՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՍՈՑԽԱԼԵՎՈՏԱԿԱՆ ՏԵՇԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊՐՈԼԵ-  
ՏԱՐԱՍՏԻ ՄԴԱՄ ՊԱԶՔԱՐԻ ՄԵԶ

Կինը թե՛ անցյալում յեվ թե՛ ներկա ժամանակում միշտ աշխա-  
տանքի տարր և յեղել, ուստի նա չի կարող ազատազրության-  
համար աշխատանքի մղած պայքարի կարեվոր տարրերից մեկը  
յինել:

Հնկ. Լենինը հսկայական նշանակություն եր տալիս կա-  
նանց մասնակցությանը սոցիալիստական շինարարության հա-  
մար մղած պայքարի մեջ. «Սոցիալիստական հասարակության  
կառուցումը, — զրում եր ընկ. Լենինը, — կսկսվի այն ժամանակի  
միայն, յերբ մենք, ծեռք բերելով կանանց լիակատար հավասա-  
րություն, կծեռնարկինք նոր աշխատանքի՝ մանք, բթացնող,  
անարդյունավետ աշխատանքից ազատված կնոջ հետ»:

Չնայելով, վոր կինը շատ դանդաղ և մտնում պրոլետա-  
րիատի ընդհանուր պայքարի մեջ, այնուամենայնիվ նա արդեն  
խոշոր դեր է կատարում միջազգային բանվորական շարժման մեջ:

Ի միջի այլոց, կինը բարոյական ահազին ազդեցություն և  
գործում բանվորների վրա, վոգեվորելով նրանց տատանման  
ռոպեներին իր հերոսությամբ: Պատմությունը շատ որինակներ  
զիտե այդպիսի հերոսության: 1921 թ. Անգլիայում մի դեպք  
կար Յորկշիրում, յերբ կանայք հայտարարել ելին. «Ավելի լավ  
ենք համարում մենքնել քաղցից, քան թե թույլ տանք տղամարդ-  
կանց, վոր զիտեն, վորպեսզի նետո մենքնեն սովից»: Գերմանացի  
կանայք թուատանի սովյալների ոգտին բացված հանգանա-  
կության ժամանակ ահազին յեռանդ ցուցանեցին հազուստե-  
ղեն, փող ժողովելիս, թուոցիներ յեվ կոչեր տարածելիս, նին  
հազուստեղենը նորոգելու արհեստանոցներ կազմակերպելիս, վո-  
ոնց մեջ նրանք աշխատում ելին իրենց առորյա աշխատանքը  
վերջացնելոց հետո: Նույն որինակները մենք տեսանք Ֆրան-  
սիայի, Բոլգարիայի, Հարավ-Ալավիայի գեղջկուհիների մեջ Առ-

սաստանի սովորական համար գյուղատնտեսական մթերքներ հավաքելիս:

Ի հարկե, դա կարեկցության զգացման արտահայտություն չեր լոկ, դա բաղաքական խոշոր յերեվույթ եր, համակրության արտահայտություն դեպի Ռուսաստանի պրոլետարիատը, վոր տապալել եր ցարերի յեվ կապիտալիստների իշխանությունը յեվ կառացում եր ազատ սոցիալիստական պետություն միջազգային իմպերալիզմի հարգածների յեվ Արեվմուտքի տնտեսական ու ֆինանսական ողակման ծանրության տակ:

Ուստի Մարտի 8-ը—Սշխատավորուհու Միջազգային նրբ մեզ համար առաձին կարեվոր նշանակություն ունի ներկայումս, յերբ կինը բաշված ե վոչ միայն բանվոր դասակարգի ընդհանուր-բաղաքական պայքարի մեջ, այլ յեվ յերբ կինը եանդիսանում ե իբրեւ սոցիալիստական պետության ակտիվ շինարար:

Ինչպես վոր Արեվմուտքի, Արեվելքի յեվ ՍևՀՄ կոմմունիստական կուսակցությունների մերձակա խնդիրները տարբերվում են իրարից այդ յերկներում տիրող տնտեսական զանազան սիստեմների տեսակետից, այնպես յեվ միջազգային կանանց շարժման մերձակա խնդիրները Արեվմուտքի, Արեվելքի յեվ ՍևՀՄ յերկներում տարբերվում են իրարից, նայելով թե տնտեսական յեվ բաղաքական ինչպիսի սիստեմ ե տիրապետում տվյալ յերկրում:

Արեվմուտքում դրանք ընդհանուր խնդիրներ են՝ պայքար բաղաքական ռեյակցիայի դեմ, պայքար տնտեսական շահագործման դեմ, պայքար նախավետական սիստեմի բայրացման համար:

Արեվելքում այդ խնդիրներն են՝ պայքար Փյոդալական կարգածատիրական բաղաքական ռեյակցիայի դեմ, պայքար նորտատիրական շահագործման դեմ, պայքար նախավետական սիստեմներին ստրկության դեմ յեվ վերջապես, պայքար կրոնական-կենցազային աղքատության ու խավարի յեվ պայքար ազգային ազատազրության համար:

Այս խնդիրների լուծման ուղիներն են վորոշում աշխատավորությունների միջազգային շարժման գործնական խնդիրները: Այս խնդիրներն են՝ աշխատավորությունների լայն մասնակցություն կապիտալի դեմ բանվորների մղած ընդհանուր-բաղաքական պայքարին բանվորական մասսայական կազմակերպությունների պրոֆմիությունների, կոմկուսակցական, պատվիրակային ժողովների միջոցով:

«Ավելի մոտիկ մասսաներին, աշխատանքի ծանրության կենտրոնը—ծեռնարկների վրա»—ահա այն ուղին, վորով բանվորութին բանվորի հետ այնտեղ հակագրում ե կազմակերպված կապիտալի ուլժին կազմակերպված պրոլետարիատի ուլժը,

Արեվելքի կինը նույնպես սկսել ե հասկանալ կազմակերպված բանվորական շարժման ամբողջ նշանակությունը, կրոնական տղիտության յեվ հին ընտանեկան կենցաղի մեշշանական ըթամտության բովանդակ վսարը: Արեվելքի կինը սկսել ե ազատվել կյանքի վրա ունեցած նեղ հայացքներից յեվ համակվել այն գիտակցությամբ, թե ինքը իր չե, վորը կարելի լինի բանեցնել տնային գործածության առարկայի նման, իր ամուսնու ստրուկը չե, այլ աշխատանքի տարր՝ ընդունակ ակտիվ կերպով մասնակցելու ազգային ազատազրության, սոցիալիզմի համար մղվող ընդհանուր պայքարին:

Բոլորովին այլ պատկեր ե տիրում ՍևՀՄ մեջ: Մեր բանվորութիններն ու գեղջկութինները մեծ փորձառություն են ծեռք բերել բաղաքացիական պատերազմի ժամանակ: Վոմանը ուղղակի մասնակցել են այդ պայքարին ՍևՀՄ բանվորների յեվ աղղակի մասնակցել են այդ պայքարին ՍևՀՄ բանվորները թեյեվ պասսիվ ելին, բայտ գյուղացիների հետ միասին, մյուսները թեյեվ պասսիվ ելին, բայց չուտեմբերյան փոթորիկը նրանց աքրերից ել խլեց նահապետական-մեշշանական բթության բողը: Մեր աշխատավորություններն յեվ գեղջկություն մենք հանդիպում ենք գործարանում, յերկաթուղում, միլիցիայում, կոռպարատիվ հիմնարկներում, հազարներով պրոֆմիությունների մեջ, խորհրդային եվ պրոֆեսիոնալ զեկավար որգաններում յեվ չափամիութենական կոմմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ:

Ամեն տեղ աշխատավորութին յեվ գեղջկութին գնում են ծեռք-ծեռքի տված բանվորների յեվ գյուղացիների խորհրդային կառուցողների հետ միասին: Ե հարկե, մեզնում պետությունը կառուցողների յեվ գեղջկութինների մեջ կատարելիք աշխատավորութինների յեվ գեղջկութինները վորոշվում են վոչ թե սեփական տնտեսական ազատազրության պայքարով (այս բանը մեր յետելի ե մնացել), այլ ՍևՀՄ բանվորներին յեվ գյուղացիներին համակած բառումով—կառուցելու ազատ սոցիալիստական պետություն, իբրեւ հենակետ համաշխարհային ամբողջ պրոլետարիատի ազատազրության:

Պարզ ե, վոր գործնական աշխատանքներն ել ՍևՀՄ աշխատավորութինների յեվ գեղջկութինների մեջ նշանալոր չափով խատավորութինների յեվ գեղջկութինների մեջ նշանակարգ չափով:

տարբերվում են Արեվմուտքում և Արեվելքում կատարվող նույն աշխատանքներից:

Մեզնում աշխատավորուհիների յեվ գեղջկուհիների մեջ կատարվող աշխատանքի կարեվորագույն ծեփերից մեկը, վորը որինակ և դարձել թե Արեվմուտքի և թե Արեվելքի համար, հանդիսանում է պատվիրակային ժողովների սիստեմը: Այս սիստեմը նպաստում է լավագույն կերպով կոմմունիստական ազդեցության մեջ առնելու վոչ միայն ծեռնարկների բանվորութիւններին, այլ յեվ տնայնագործ կանանց յեվ աղքատ գեղջկուհիներին: Նույն այդ սիստեմը նշանավոր չափով ոգնեց ընդգրկելու նայել տնային բանվորութիւններին, վորոնց կազմակերպելը մինչեվ այժմ դժվար եր լինում: Աշխատանքի այս ծեփի ավելի յեվս լայն գործադրումը մեր Կինբաժնների կարեվորագույն խնդիրն և աշխատավորութիւնների յեվ գեղջկուհիների մեջ աշխատելու համար:

Մեր կուսակցության առջև, սակայն, աշխատավորութիւնների յեվ գեղջկուհիների մեջ կատարելիք աշխատանքը կանգնած է դեռ յեվս իրենվ ծալը աստիճան դժվարին մի խնդիր, վորը պահանջում է մեծ ուշադրություն յեվ ույժերի մեծ լարում: Կինը մեզնում, նայելով վերեվ նիշված իր բոլոր արժանիքներին, մասսայորեն դեռ յեվս բոլորովին անբավարար չափով և բաշված ընդհանուր շինարարական աշխատանքի: Մեր կուսակցության ազդեցությունը աշխատավորութիւնների յեվ գեղջկուհիների լայն խավերի վրա դեռ յեվս բավարար չափով մեծ չե: Աշխատավորութիւն մեզնում մասսայորեն կազմում և պրոլետարիատի դեռ յեվս ամենից ավելի բիշ վորակված յեվ վատ վարձատրվող մասը:

Այս հանգմանքներով ել վորոշվում են մեզնում աշխատավորութիւնների յեվ գեղջկուհիների մեջ կատարելիք աշխատանքի մերձական իննիքները:

Մարտի 8-ի որը, Միջազգային Բանվորական Որվա տոնին մենք պիտք ե կազմենք այդ ասպարեզում մեր կատարած աշխատանքի հաշվինարդարը, նկատի առնենք այդ աշխատանքի թերությունները յեվ ամեն կերպ ջանանք այդ թերությունները վերացնել:

Իսկական տոնը – Աշխատավորութիւնների Միջազգային Որվա մեծ տոնը կգա այն ժամանակ, յերբ կինը աղատ յեվ աղատագրված կինի յերկրագնտիս մնացած մասում յեվս:

## «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԸ» – ՄԱՐՏԻ 8-Ը ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

«Պայքարի բոցի մեջ են ծնվում պրոլետական տոները»:

Մարտի 8-ը! Ամբողջ աշխատավոր կանանց տոնը: Կանանց աշխատավոր մասսաների մարտական ույժերի յեվ համերաշխության զորատեսի որը, նրանց գիտակցության զորատեսի, նրանց նվաճումների հաշվեառման որը:

Այստեղ, ուր աշխատավորութիւնները տնքում են կապիտալի նշանակած տակ, «Միջազգային որը» նրանք ցուցադրում են թշնամիների առջև իրենց պատրաստականությունը կուվելու, նրանց պլակատների վրա մակազրված ե՝ «Կորչն գիշատիչ կապիտալիստները, կեցցե սոցիալիզմը»:

Այն յերկրներում, ուր աշխատավորների ընդհանուր զանքերով ջարդված ե ստրկության դարավոր շղթան, ուր հին աշխատանքի ավելացների վրա բարձրանում և աշխարհում մինչեվ այժմ չտեսնված այն նոր շենքը, վորի անունն և կոմմունիզմ, — այնտեղ Մարտի 8-ի որը ծածանվող կաս-կարմիր դրոշակների տակ քաղաքների յեվ ցյուղերի աշխատավորութիւնները տոնում են իրենց հաղթանակը, ավելի յեվս սեղմում իրենց շարքերը նոր ու նոր նվաճումներ ծեռք բերելու կուլտուրական յեվ տնտեսական նակատներում իրենց լիակատար յեվ վերջնական ազատագրության համար:

Անդրկովկասի աշխատավորութիւնն հնարավորություն ստացավ իր որը տոնելու խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո միայն, այն և 1921 թվից:

Մեզնում, Անդրկովկասում, ուր աշխատավորութիւններն ու գեղջկուհիները կաշկանդված ենին բնատանեկան յեվ հասարակական կենցաղի առանձնահատուկ պայմանների մեջ, այդ որը բացատիկ նշանակություն ունի:

«Աշխատավորություն միջազգային որը» առաջին անգամ տոնվեց Թիֆլիսում խորհրդայինացումից յերկու շաբաթ հետո:

Դա աշխատավորուհիների առաջին մասսայական յելույթն էր, վոր հակայական ցուցի կերպարանը առավ: «Այսոր միայն զգացինք, վոր մենք եւ մարդիկ ենք, այսոր միայն իմացանք, թե ինչ է Խորհրդային իշխանությունը յեվ ինչ և տալիս նա մեզ», — հուզված ասում էր ամբողնից աշխատավորուհին, յեվ այդ իրոք վոր ուրախառիթ մի որ եր աշխատավորուհիների կյանքում:

«Աշխատավորուհու միջազգային որը» ավելի լայնորեն տոնվեց Անդրկովկասում հետեւյալ 1922 թվին, յերբ Աշխատավորուհիների ու Գեղջկուհիների Բաժինները կարողացել ելին բավականաչափ ծավալի իրենց աշխատանքը: Այդ որը տոնվեց վոչ միայն բաղաբներում, այլ յեվ մի քանի զավառներում, ուր գումարված ելին կոնֆերենցիաներ, վորոնց մասնակցում ելին գեղջկուհիները:

Ի նկատի առնելով, վոր աշխատավորուհիների ազատագրության գործում շահագրգուված եւ ամբողջ պրոլետարիատը, աշխատավորուհիների որը տոնված էր վոչ միայն վորպես կանանց, այլ յեվ վորպես համապոլետարական տոն:

Անդրկովկասյան բոլոր հանրապետությունների մեջ տոնակատարությունն անցավ մեծ վոգեվորությամբ: Ամենահեռավոր խուլ անկյուններից, ջնայելով տեղափոխության դժվարություններին, հարյուրավոր պատվիրակութիւններ ելին հավաքվել զավառական յեվ բաղաբային կոնֆերենցիաներին: Դարավագյազի զավառում (Հայաստան) ամբիոն բարձրացած մի գեղջկուհի ասաց: «Ինչպես վոր սեփական ծեռքիով հանապարհը մաքրելով ծյունից մենք յեկանք հասանք այս հանդիսավոր ժողովին, այնպես յեվ, հաղթահարելով մեր հանապարհին ըորոք դժվարություններն ու խորնդունները, հիանենք մենք բաղդավոր որերի»:

Դարերով սերմանված ազգային պառակտուման մնացորդները վերացնելու նպատակով տոնին միջազգային բնույթ եր տրված: Թիմիթսում, զավառա-բաղաբային միացյալ կոնֆերենցիայից զատ, տեղի ունեցավ նայեվ թրքուհիների, յեզդուհիների, հրեյուհիների կոնֆերենցիա: Բորչալովի զավառի կոնֆերենցիայում փրացունու կողքին կարելի յեր տիսնել թրքունուն, հայունուն, սատունուն, զերմանունուն, հրեյունուն, վորոնք հիշում ելին կոտորածի ասրամիներով լի, մղմավանչային որերը յեվ յերդվում պահպանել ժողովուրդների յեղբայրությունը, բարձր պահել խաղաղության դրոշակը:

Միեվույն ժամանակ զիտության ծարավը յեվ ան-

կախ աշխատանքի ծգուումը արտահայտվում ելին աշխատավորուհիների յեվ զեղզկուհիների բոլոր յելույթների մեջ: Թրքուհին (Յերեվան), շաղբան դեն ծգելով, ասաց: «Յես գեն եմ ծգում այս չաղբան, սրա յետեվը կամի ուրիշ, ավելի թանձր չաղբա, վորով դարերից ի վեր պարուրված ե մեր հոգին: Այդ չաղբան տղիտությունն ե, վորը դեն չպատել հեշտ չե, ուստի խնդրում եմ ամենից առաջ սովորեցնել մեզ կարդալ յեվ զրել: Այն ժամանակ միայն մենք կարող կլինենք դուրս գալ խավարից դեպի նոր լուսավոր ուղի»:

Սրտազրավ եր կարմիր բանակի վերաբերմունքը դեպի այդ որը: Վողջունի խոսքը ասելիս նրա ներկայացուցիչները պատրաստակամություն ելին հայտնում պաշտպան կանգնելու աշխատավորումու ազատազրությանը, իրենվ պրոլետարական մեծ հեղափոխության նվաճումներից մեկի: «Վողջունում եմ ծեզ կարմիր բարբիկադների կողմից, ստեղինյան փառապանծ մարտիկների կողմից: Աշխատավորուհիների, աշխատիր խաղաղ, մնադապահների մոտ, քեզ պահպանում ե կարմիր բանակայինի հուղարկանից մոխիս», — ասաց Բագվում Ստեղինյան դիվիզիայի զինալի սիբինը», — ասաց Բագվում Ստեղինյան դիվիզիայի զինալի կոմը միտինզի մեջ արտասանած իր հառում:

Ի նկատի առնելով մի կողմից կանաց աշխատավոր մասների չափազանց յետաճնացությունը յեվ աչքաթող արած վիճակը յեվ մյուս կողմից նրանց նյութական ծանր դրությունը, նաև յեվ շարք մանկատներ գործնական միջոցները, բացքած ելին մի շարք մանկատներ թիմիթսում Զուգդիդի զավառում յեվ թեխավում: Քութայիսում թարացված ելին մանկատուն յեվ գրազիտության դպրոց: Քութայիսի զավառում յեվ նուխում հետազոտված ելին բոլոր մանկատները յեվ մանկապարտեզները: Բազվում բացված ելին նախատները յեվ պարունակութիւնների դարձնմացներ յեվ գործազորել կամանց դպրոցականուհիների զարննմացների դրությունը: Փոթիի լավված եր զյություն ունեցող մասների դրությունը: Փոթիի լավված բացված ելին լիազրարան յեվ կարանողների արտեր, զավառում բացված ելին լիազրարան յեվ կարանողների լիազրարանի զավառում — լիազրարան, Յերեվանում — լիազրարան

Միեվույն ժամանակ զիտության ծարավը յեվ ան-

յեվ կարկատանի արհեստանոց, Եջմիածնում—կարուծելի յեվ մանշածի արհեստանոցներ:

Այդ որը հավերժացնելու համար Թիֆլիսում կայացալ Ռոզա Լուքսեմբուրգի արձանի բացումը յեվ ակումբ հիմնվեց թրուհիների—կանանց զանգվածների այդ ամենից ավելի ճշնշված մասի համար:

Բացի սրանից, Հայաստանում անցկացվեց մայրության յեվ մանկության պաշտպանության շաբաթ:

Այդ որը աշխատավորութիները չմոռացան Պովոլժյեյի սովորական տառապանքները, փորոնց ամոքելու համար նրանք իրենց այդ որվա աշխատավարձի մի մասը հատկացրին հիշյալ սովյաների ոգուն: Նույն նպատակով տուփերով հանգանակություն եր կատարված Բագվում, Յերեվանում, Թիֆլիսում:

Մարտի 8-ի տոնակատարությունը Անդրկովկասի խորհրդայնացման 4-րդ տարեդարձին, 1924 թվին, վլայում և այն նոկայական առաջադիմության, ազողությունների ու հաղթանակների մասին, վոր ծեռք ելին բերել աշխատավորութիները իրենց իրական ազատազրության դժվարին ճանապարհին: Այդ որվա նշանաբանն եր՝ «Հիշիր յեվ կատարիր Լենինի ավանդները»: Այդ նշանաբանը կենդանի արձագանք գտավ աշխատավորութիների յեվ գեղջկութիների սրտերում... «Նեշիր հանգիստ, թանգին իլիս, մենք կզնանք քո գծած ճանապարհով: Թող մոտենա ճամաշխարհային բուրժուազիայի վախճանը յեվ շուտով փողփող կամիր դրոշակը ամբողջ աշխարհի վրա»... «Շատ թագավորներ կային, յեվ մենք ամենք տնրում ու ապրում ելինք խավարի մեջ. յեկավ Իլիջը յեվ արեվի պես լուսավորեց մեր ճանապարհը»... Այսպես ելին զրում թղթակից աշխատավորութիները մարտի 8-ի որը:

Բազմամարդ թափորները, վոր այդ որը լայն ու անվերջ հոսանքներով վողողել ելին փողոցները, կարմիր դրոշակները յեվ պլակատները, փորոնք կոչ ելին անում վերակազմելու կյանքը նոր կոլեկտիվ հիմունքների վրա, զոդելու աշխատավորութիներին ու գեղջկութիներին իրար հետ, զավակներին ծնողների հետ յեվ այլն, հանդիսավոր ժողովները, ներկայացումները, հիշողությունների յերեկոները, վորոնք ուրուրեր մի ամբողջ շաբաթ ելին տեսքում, մասսայական հասարակական բնույթ ելին տալիս տոնակատարությանը:

Բագվում, Անդրկովկասի պրոետարական կենտրոնում, տո-

նակատարությանը մասնակցում ելին ավելի քան 18 հազար հոգի, տղամարդ թե կին: Փողովներին, ներկայացումներին յեվ այլն ակտիվ մասնակցողները թրուհիներն ելին:

Նույնը կարելի յեր նկատել նայեվ զավառներում յեվ նույնիսկ ամենայետամնաց ու խուլ անկյուններում, ուր այդ որը կարողացել եր շարժել ամբողջ զյուղացիական մասսան: Սհա ինչպես և նկարազրում մի ականատես-պատվիրակութի Գանջայից: «Թրուհիները՝ զահել թե պառավ, տեղացի թե հեռավոր գյուղերից, զալիս ելին խմբերով այն հավատով, թե կանանց մեծացող սեբունդը չի լինի նախալաշարություններով, խավարով յեվ տղիտությամբ պաշարված սորկութի, այլ կդառնա ազատ քաղաքացութի, տղամարդու հետ ծեռք ծեռքի տված՝ համարձակություն նոր կյանք կառուցող: Ավ չզիտ յեվ իր ազբով չի տեսել Սրբելքի կուոց իրավազրկության յեվ ստրկության ամբողջ սարսափը, նա չի հասկանա այն ուրախությունը, վոր զգացվում եր Մարտի 8-ին»:

Թղթակցութին նոխուց գրում ե. «Գավառամասերի ներկայացուցիչների հետ կայացած քաղաքային կոնֆերենցիալին ներկա յեր մոտ 1000 կին. խանդավառությունն աննկարազրելի յե: Մարտի 8-ի համար բաց եր թողված մի լրազիր, վորի հոդվածները գրել ելին իրենք աշխատավորութիները յեվ վորի մեջ զետեղված ելին ակտիվ աշխատավորութիների պատկերները»:

Ինչ վերաբերում ե Վրաստանին, կենարունում Թիֆլիսում «Միջազգային որը» թափորի մեջ եր քաշել 7.000 աշխատավորութի: Վրաստանի բազմաթիվ զավառներում տոնը կատարվում եր անսովոր հանդիսավորությամբ: «Կարելի յև ասել, վոր Մարտի 8-ի որն անցավ փառանելոց: Խորհրդային իշխանության զոյության յերեք տարվա ընթացքում վոչ մի տոն, վոչ մի կամպանիա ավելի շատ ուշադրություն չի կրավել, քան այդ որը» — հաղորդում ե մի պատվիրակութի Զողովիդի զավառից: Բորչալուի զավառում տոնը ընդգրկել եր բոլոր 4 շրջաններն ել — 36 թուրք յեվ 9 հայ զուղեր: Նույնախի մասսայական, համաժողովրդական բնույթ եր կրում Մարտի 8-ի տոնակատարությունը նայեվ մյուս զավառներում — Ռանալի, Թելավի, Քոթալիսի, Ախալբալարի, յեվ Սրբազնի ինքնավար հանրապետություններում:

Մի քան, վոր առանձնապես նշանակալից եր զարձնում 1924 թ. Մարտի 8-ը, այդ այն առանձին ուշադրությունն ու նո-

գացողությունն եր, վոր ցուց եր տրվում կանանց կենցաղը բարելավող, նրանց աշխատանքային վորակը բարձրացնող հմնարկների բացմանը:

Գրեթե բոլոր զավառները լայն ծեռներեցություն յեվ ավելի մեծ յեռանդ ցուցահանեցին մանկատներ, ծննդաբերական բաժանմունքներ, կանանց ապաստարաններ, ակումբեր, պրոֆեսիոններ, անգրագիտությունը վերացնող դպրոցներ, արտելներ, լվացքարաններ, մանածի արհեստանոցներ յեվ այլն բանալով կամ յեղածներն ընդարձակելով:

Այսպես, Լենինականի զավառում բացված են արտելներ, լվացքարան յեվ կարի արհեստանոց, նմանապես յեվ ճաշարան յերկաթուղային բանվորների համար:

Լոտի-Փամբակի զավառում, Ստեփանավանում (Նախկին Զալալ-Ռյառ) բացված են կարուծելի դպրոց, մանածի յեվ կարի արհեստանոցներ:

Չուգգիդում (Վրաստան) Կինբաժնի յեվ աշխատավորուհիների ջանրերով բացված ե կարի յեվ լվացքարարների արտել, նմանապես յեվ ճաշարան:

Թելավի զավառի 5 շրջաններում բացված են ծեռագործի 5 դպրոց յեվ 3 շրջանում 3 դպրոց անգրագիտությունը վերացնելու համար, իսկ բուն թելավում բացված ե 1 մանածային արտել յեվ մանկատն 30 յերեխանների համար. բաղաբային հիվանդանոցին կից հիմնված և 8 մահճակալ ծննդաբեր կանանց համար:

Գանգայում բացված ե կանանց ոթելամ յեվ թուրք կանանց ակումբը տեղափոխված ե նոր կանավորված շենք:

Շամխորի զավառում մանկատան համար մանուֆակտորա յե բաց թողված: Գյուղացիական ակումբին կից կազմակերպված ե գեղջուկուն անկուն, բաղաբային հիվանդանոցին կից հասուկ ծննդաբերական բաժին ե բացված:

Նախիջնվանի ինքնավար հանրապետության կոմիտեն բաց է թողել 700 արշին բյազ մանկատան համար, վորը վերանորոգված ե, բացված ե ծննդաբերական բաժին 3 մահճակալով:

Բազմում տեղական խորհուրդը միջոցներ ե բաց թողել բանալու ծեկեր մանկան տուն. Մարդաբայանի գյուղական հիվանդանոցին յեվ շրջանային 3 հիվանդանոցներ[այս կեց հիմնված են ծննդաբերական մահճականներ]: Բինի գյուղում բացված ե գելլչերական կայան յեվ կանանց կրնառվառուցիա ծննդաբերա-

կան տան կից: Զեռնարկված ե հիմնելու 2-րդ մանկական կոնսուլտացիա բաղաբային ապահովագրական դրամարկղի միջոցներով:

Աղղամում սարքավորված ե մանածային յեվ մետաքսաթելի արհեստանոց: Մանկատան համար կարված ե 1000 հատ սպիտակեղեն, ծեռք են բերված անկողնի պարագաներ յեվ 60 արշին կտոր վերնազգեստի համար: Բացված ե ծննդաբերական բաժանմունք 3 մահճակալով:

Ի նկատի ունենալով, վոր մեր անդրկողվասյան իրականության պայմաններում կանանց յեվ մանկանց խնամազրկությունը, վորը սերտ կերպով կապված ե մեկը մյուսի հետ, առանձնապես զգալի յե, Մարտի 8-ի առիթով Վրաստանում բացվեց «Յերեզգական բարեկամների» ընկերություն, վորը արձագանք գտավ հասարակության լայն խավերում: Յերեզգանում անցկացվեց յերեկութների, ներկայացումների յեվ գասախոսությունների շաբաթ, վորոնց յեկամուտը հատկացվեց «Մոր յեվ մանկան ոգնության վորոնց յեկամուտը հատկացվեց «Մոր յեվ մանկան ոգնության ընկերության» ոգտին: Հանքարդյունաբերական բանվորուհիները բազմում վորոշեցին խնամազրկություններին տալ այն 1000 արշին կարմիր կտորեղեննը, վոր հանրային բանվորների միունքունքներին ոգտին: Յանքարդյունաբերական բանվորուհիները բազմում վորոշեցին խնամազրկություններին տալ այն 10.000 լ. հատկացրեց «Յերեխանց բարեկամների» ընկերությանը ոժանդակելու համար:

Բանվորուհիների այս ծեռներեցությանն աջակցեցին ինչպես կուսակցական, այնպես յեվ խորհրդային կազմակերպությունները, վորոնք ոգնության յեվ համերաշխության կոչ արին համասաններին: Մանդարկանագործկոմիտ այդ որը 10.000 լ. հատկացրեց «Յերեխանց բարեկամների» ընկերությանը ոժանդակելու համար:

Մարտի 8-ի «Միջազգային օրը Բազմում յեվ թիֆլիսում կուսակցության մեջ ընդունվեցին դազգանի 196 բանվորուհի:

Մարտի 8-ի կանանց կոմմունիստական որը 1925 թվին, Համամիտթ, նոմ. կուս. (թ.) Անդրկ. Յերկ. Կոմիտեյի առաջարկությամբ, անգլացվեց իբրեւ համապատասարական յեվ բաղաբային կանանց աշխատավորական ամենալայն մասամբները կոմկուսակցության յեվ Խորհրդային իշխանության շորջը այս լոգունգի տակ՝ «Բանվորուհի յեվ գեղջկութիւն-Մանդարկան աշխատավորուհի, հիշիր աշխատավորների պարագային ավանդները, գնա լինինիզմի ուղիով, մտիր լինինյան կուսակցությունը, ավելի սեղմիր ուղիով,

շարքերդ Խորհրդային իշխանության շուրջը, ուղարկիր զավակ-ներիդ պիոներական կազմակերպությունները»:

Գյուղացիական լայն մասսաներին այս տոնակատարությանը մարմիմալ չափով մասնակցել տալու նպատակով, տոնակատարությունը փոխադրված եր շրջակայքը յեվ լայնորեն ընդգրկեց զավառական յեվ շրջանային կենտրոնները, նմանապես յեվ մեծ գուղբը, ուր տեղի ունեցան հանդիսավոր նիստեր, կոնֆերենցիաներ, ներկայացումներ, բեմադրություններ յեվ այլն. նույն որվա առիթով կատարվեցին «հոկտեմբերյան կունքներ», «կարմիր հարսանիքներ» համապատասխան բովանդակությամբ,—միքան, վոր ցույց ե տալիս, թե նոր կենցաղն արմատանում ե մասսաների մեջ:

Մարտի 8-ի որվա ցայտուն արտացոյրումը հանդիսացան գործնական ձեռնարկները աշխատավորների յեվ գեղջկուհիների կենցաղը բարելավելու բնազավառում: Սնդրկուվասյան բոլոր հանրապետություններում, կուսակցական, խորհրդային յեվ տնտեսական մարմինների աջակցությամբ, ընդարձակված յեվ վերասարժապորված ելին կանանց ազատազրող հիմնարկները—մասունները, կոնսուլտացիաները, ծննդարերական մահճակալները, արտելները, բացված ելին պրոֆտեխնիքական դպրոցներ, կուրսներ, «գեղջկուհիների անկյուններ» յեվ այլն:

Պատվիրակային ժողովներում, ակումբներում հանդիսավոր պարագաների մեջ կուսակցության անդամ յեվ թիկնածու ընդունվեցին աշխատավորուհիներ, գեղջկուհիներ յեվ բատրակուհիներ զիսավորապես պատվիրակուհիներից, ուսուցուհիներից յեվ հասարակական գործիչ կանանցից, վորոնք դասակարգային գիտակցություն ելին ցույց տվել: Նույն որվա առիթով աղջիկներ ընդունվեցին ԿԵՍԵՄ յեվ պիոներական կոլլեկտիվների մեջ:

Ի նկատի ունենալով բատրակուհիների անթիշտ հաշվառությունը յեվ այն հանգամանքը, վոր նրանք անհշան տոկոս ելին կազմում Հողանտառի միության մեջ, տեղ-տեղ հաշվառության յևնթարկվեցին նրանք յեվ ընդունվեցին այդ միության մեջ:

Կուսակցական լայն մասսաներին Մարտի 8-ի որվանշանակությանը ծանոթացնելու յեվ նրանց ուշադրությունը կենցաղի խնդիրների վրա դարձնելու համար, համապատասխան զեկուցումներ ելին արված կոմ. Կուս. յեվ ԿԵՍԵՄ բջիջների նիստերում, ծեռնարկությունների մեջ, ակումբներում յեվ այլն:

Այդ որր ցայտուն արտահայտություն զայավ նայել մա-


մուի մեջ: Աշխատավորուհիների յեվ գեղջկուհիների կինտրոնական բաժինների հրատարակած ժուրնալների հերթական համարները, նմանապես յեվ պարբերական մամուլը Մարտի 8-ին ամբողջովին նվիրված ելին այդ որվան. բացի սրանից, հրատարակված ելին բրոցյուրներ, թուուցիկներ, պլակատներ համապատասխան բովանդակությամբ:

Բոլոր վերոգրյալը պերճախոս ապացույց ե այն բանի, թե ինչպես Մարտի 8-ի որը տարե-ցտարի նշանացույց ե հանդիսանում հենց նոր ստրկության շղթաները դեն շարտած յեվ հասարակական կյանքի ասպարեզ մտած աշխատավոր կանանց մասսաների վոչ միայն ինքնագիտակցության, ինքնազործունեյության յեվ ակտիվության աճման, այլ յեվ այն խոշոր նվաճումների, վոր ծեռք են բերված նրանց իրական ազատազրման ընազավառում:

Կոմիտումի ղեկավարությամբ Աշխատավորուների յեվ Գեղջկուհիների Բաժինները կարողացան խավար, ճնշված կամանց զիտակցության մեջ արմատացնել ուսանելու, կենցաղի յետամնաց ծեվերի դեմ կովելու յեվ կյանքը նոր կոլեկտիվ հիմունքների վրա վերակազմելու անհրաժեշտությունը:

Մարտի 8-ի «Միջազգային որը» ներկա 1926 թվին Անդրկովկասի աշխատավորուհիները, անցած տարիների նման, ամբողջ աշխարհի առջեվ կցուցահանեն իրենց միասնականությունը, համերաշխությունը, նոր պայքարի յելնելու պատրաստականությունը Խորհրդային իշխանության դրոշակների տակ, նմանապես յեվ կկազմեն մեր սոցիալիստական շինարարության բազմազան ճակատներում ծեռք բերած իրենց նվաճումների հաշվեհարդարը:

#### Ն. Աղաջապահ



## ԿՈՂՂԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԿԻՆԸ

Մեր կոռպերատիվային շարժումը գարզանում և սոցիալիզմի գրոշակի տակ: Նրա վերջնական նպատակը տնտեսական կյանքի համայնացումն է: Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում սա ուստափիա չե, այլ որքա գործնական խնդիր: «Հին կոռպերացիայի» ղեկավարները նույնակես ծգուում ելին սոցիալիզմի կոռպերացիայի միջոցով: Բայց նրանք սոցիալիզմին ուղում ելին համեմ առանց բանվորների դասակարգային կովի խաղաղ, առանց ցնցումների, բայց առ քայլ նվաճելով կոռպերացիայի զարգացման միջոցով կապիտալիզմի ամրությունները: Այսպես նրանք յերազում ելին մի զեղեցիկ որ աննկատելի կերպով, ի զարմանս ամենքի կոռպերատիվային հաղթական կառքի վրա բազմաձայն մտնել սոցիալիզմի թափակորությունը: Սոցիալիզմի թագավորությունը նրանք, ի հարկե, ըմտան, խրվելով մանր-բուրժուական հղեղութուական ճահճնի տղմուտները: Խոկ նրանց կոռպերատիվային հաղթական կառքը ծածկվեց մանր-բուրժուական իդեոլոգիայի թանձր մամուռով: Կապիտալիզմը պայթեցնելու փոխարեն, ինքն այդ կոռպերացիան պայթեցվեց կապիտալիզմի կողմից:

Կապիտալիզմը հաղթահարելու ուղին անցնում և պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով: Հաղթական պրոլետարական հեղափոխությունն է միայն, վոր ստեղծում և այն նպատակոր հողը, վորի վրա կարող են փարթամորեն բանել կոռպերացիայի սերմերը:

Բայց ի՞նչ անելիք ունի կոռպերացիան «հետեւյալ որը սոցիալական հեղափոխությունից հետո»:

Հաղթական հեղափոխությունն այն հետեւյանքն է միայն ունենում, վոր արտադրության գործիքների յեվ միջոցների կապիտալիստական խոշոր սեփականությունը համայնացվում և չեղափոխությունն իր թամբ դնում է միայն կապիտալիստական սեփականության վրա: Սա անձեռնմխելի յե թողնում ման-

աշխատավորական արտադրողների ընդարձակ խավի—արհետավորների, տնայնագործների յեվ զյուղացիների սեփականությունը: Հասարակական այդ բնդարձակ խավի նշանակությունը չափազանց մեծ և մեր գերազանցորեն յերկրագործական յերկը ներում: Բայց մանք արտադրողը—լինի նա զյուղացի թե արհետավոր—իր տնտեսությունը վարում է ինքնովին, սեփական ույժերով, իր ռիսկով: Նա արտադրում է վոչ միայն ինքնովին, գործադրելով տեխնիկայի հին նահապետական ծեվերը, այլ յեվ ինքնովին ծախում է շուկայում այն, ինչ վոր արտադրում է: Սոցիալիստական արդյունաբերությունը (բանվոր-գյուղացիական պետության ձեռքում գտնված արդյունաբերությունը) տեխնիքական հնարավորություն ընդի անմիջականորեն կապ հաստատելու զյուղացիական միլիոնավոր մանր տնտեսությունների նետ: Սա ույժերից վեր գործ է: Մրա համար հարկավոր կիներ պահել պետական պաշտոնյաների մի ամրող բանակ, վորոնց գործը կիներ մի կողմից զյուղ ուղարկել զյուղական մանր տղնտեսությունների համար պետական արդյունաբերության արտադրանքները, այն եւ յերկրագործական գործիքներ, հանրային մթերքները, մանուֆակտուրա, շաքար, լուցկի յեվ այն, յեվ այն, մյուս կողմից քաղաք ուղարկել զյուղացիական տնտեսության մթերքները—արդյունաբերական հում նյութեր՝ բամբակ, բուրդ, կաշի, մետաքս, նմանապես յեվ ուտեստի մթերքներ—հաց, յուղ, ձու, պանիր յեվ այն, յեվ այն: Պետական «շինովնիկ-միջնորդների» այդ հսկայական բանակի գործունեյությանը վերահսկելու վոչ մի հնարավորություն չեր լինի: Խոկ առանց վերահսկողության թողնելն ել աղբյուր կծառայեր մեծ ու անվերջ զեղծումների: Սա մի նոր ծանր բեռ կդառնար զյուղացիության համար:

Սա խնդրի մի կողմն է: Կա սրա մյուս կողմն եւ, վորը վոչ պակաս, յեթե վոչ ավելի յեվս անմիջիթարական է: Ինքն իրեն թողած զյուղացի մանր արտադրողը գրեթե բոլորովին անպաշտպան մի եյակ է: Յեթե նա զեռ յեվս կարող է կատարելական ազատորեն փորել իր հողամասը, ոգտվելով դրա համար իր պապերից ժառանգած արտադրության հնադարյան տեխնիքական ծեվերից ու միջոցներից, ընդ սմին զգալով իրեն անկախ տեր ու տիրական իր հողամասի վրա,—ընդհակառակը նա արդեն բոլորովին անպաշտպան և դառնում, յերը սկսում է շոշափման մեջ մանել արտաքին աշխարհի հետ: Այստեղ նրա առջեվ ընդարձակ, անձանոթ շուկա յե բացվում: Ծանոթ լինելով

արտադրության տեխնիքական ծեվերին, նա անփորձ ու անպաշտպան ե դառնում, յերբ նրա առջեվ ծառանում ե իր «յերեսի քրտինքով» արտադրածը վաճառելու դժվարին խնդիրը:

Ուր, ում յեվ ի՞նչպես վաճառի: Վո՞րտեղից պիտի գիտենա այդ: Արտադրին աշխարհը նրա համար ծածկված ե անթափանցելի վարագույրի տակ: Բայց սրանից, կալո՞ղ ե սպասել: Մորթես ել—փող ե հարկավոր նրան: Ում ծախի: Ահա այստեղ ե, վոր նրան «ոգնության» ե գալիս մասնավոր առեվտրական միջնորդը—չարչն, առաջարկելով նրան իր «ծառայությունը» իրեվ միջնորդ ողակ նրա յեվ անորոշ «շուկայի» միջեվ: Այսպիսով զյուղացիական մանր տնտեսությունն ընկնում ե առեվտրա-միջնորդական կապիտալի ճորտության մեջ, վորը դառնում ե նրա քայլայման յեվ աղքատացման աղբյուր: Մասնավոր առեվտրական կապիտալը, այսպիսով, վորպես միջնորդական ողակ, պատվար ե կանգնում սոցիալիստական արդյունաբերության յեվ մանր զյուղացիական տնտեսության միջեվ: Բայց այդ «ողակը» կապիտալիստական ցեց ե, վորը հավասարակես ուտում ե ինչպես սոցիալիստական արդյունաբերության, այնպես յեվ զյուղացիական աշխատավորական տնտեսության հիմքերը:

Իր ծեռքերի մեջ պահելով ապրանքային շուկան, առեվտրական միջնորդը քիչ չի քայլայում նայեվ բանվորին: Նա ուտում ե նրա աշխատավորական յեկամուտն յեվս, իջեցնելով նրա վաստակի գնողական ույժը:

Ուստի, չնայելով խոշոր կապիտալիստական սեփականության համայնացման, կապիտալիստական փոշին այնուամենայի շարունակում ե թունավորել մեր սոցիալիստական հանրանիվ շարունակում ե թունավորել մեր սոցիալիստական որգանիզմի ծավառությունների ժողովրդական տնտեսության որգանիզմի ծավառությունները:

Խնդիրն այն ե, վոր պիտի ե վոյնչացնել, վերջնականապես մարեկ այդ կապիտալիստական փոշին: Մեծ, անհետաձեկիլ մարեկ այդ կապիտալիստական անմար վոգեվորուխնդիր ե այս յեվ արժանի հասարակական անմար վոգեվորուխնդիր ե այս յեվ արժանի հասարակական անմար վոգեվորուխնդիր: Բայց ի՞նչպես մոտենալ այդ խնդիրն: Վո՞րն ե այն ության: Բայց ի՞նչպես մոտենալ այդ խնդիրն: Վո՞րն ե այն ության: Վոր տանում ե նրա լուծմանը: Աշխարհիս հալածվածների զին, վոր տանում ե նրա լուծմանը: Աշխարհիս հալածվածների զրոշակի վրա մեծ պարագաներ են արդյունաբերության հետ, վորն յեվ ամուր հիմք կդնի ապագա ծավալուն սոցիալիստական իրավակարգի համար:

Այդ իրավակարգի իրագործման համար զյուղացիական կոպերացիայի լայն, համայնապարփակ զարգացումը դեռեկս բավական չե: Անհրաժեշտ ե նմանապես կոպերացիայի զարգացումը: Գյուղացիական տնտեսությունը կվերակազմվի սոցիալիստական հիմունքների վրա: Այն ժամանակ ել կիսիի կապիտալիզմի վերջին ժամը զյուղում: Համայնացրած զյուղացիական տնտեսությունը կսահմանի այն անմիջական «զողը» սոցիալիստականացրած քաղաքային արդյունաբերության հետ, վորն յեվ ամուր հիմք կդնի ապագա ծավալուն սոցիալիստական իրավակարգի համար:

Այդ իրավակարգի իրագործման համար զյուղացիական կոպերացիայի լայն, համայնապարփակ զարգացումը դեռեկս բավական չե: Անհրաժեշտ ե նմանապես կոպերացիայի զարգացումը բաղադրում:

Բանվորը զյուղացիական տնտեսության մթերքների զիսավորողն ե: Նա վորոշ չափով սպառող ե նայեվ քաղաքային արդյունազործության արտադրանքների: Ինքն իրեն թողած՝ նա նոյնպես շահագործման առարկա յե դառնում առեվտրական միջնորդների ծեռքին, բայց արդեն իրեվ սպառող: Եթեվ արտադրող նա արդեն ազատել ե իրեն, դեն շպրտելով արդյունաբերական կապիտալի լուծը: Բայց մի լծից ազատվելով, նա դեռեկս ազատ չե մլուսից: Այդ ազատազրման ուղին անցնում ե արդեն սպառողական կոպերացիայի միջով: Վերջինս կկապի նրան անմիջականորեն վոչ միայն պետական արդյունաբերության մասին պատճենությունը կապահպակ կատարված է առաջարկությունը:

Մանր, ցարուցրիվ, իրարից բաժան-բաժան յեղած զյուղացիական տնտեսությունների աշխարհի մեջ կոպերացիական ե:

թյան, այլեւ համայնորեն կազմակերպված գյուղացիական տընտեսության հետ:

Այսպիսով կոռավերացիայի հետագա զարգացումը համազոր և սոցիալիզմի զարգացման: Անա թե ինչու Վ. Լենինը մեզնում բանվոր դասակարգի հաղթության շնորհիվ բացված դարավլուխն ամենայն իրավամք համարում եր կոռավերատիվային գարագլուխ:

\* \* \*

Այսպես ուրեմն նպատակները պարզ են: Զարգացման ուղիները՝ վորոշված: Կոռավերացիայի աստղը վառվում է ավելի պայծառ, քան յերբեմն: Մնում է աշխատել, մեծ ջանասիրությամբ աշխատել մեր կոռավերացիայի դեռևս վոչ բավարար շափով մշակված ասպարեզում: Ընդհանրական կոռավերացում—ահա այն խնդիրը, վոր դնում է մեր առջեվ զարգացման հետագա ընթացքը: Խնդիրն այն է, վոր պետք է ստեղծել «իսկական կոռավերացիա, վորին մասնակցում են իսկական ժողովրդական մասսաները»:

Եսկ այդ անկարելի յե առանց կոռավերատիվային նոր աշխարհի շինարարությանը ակտիվ մասնակցության կոչելու կնոջը, վորը կազմում է մարդկային ցեղի կեսը: Այս կարծես թե ինըն ըստ ինքյան նաևկանալի նշմարտություն է: Բայց այդ միայն ըստ յերեխույթին: Այդ ճշմարտության, իսկության զեմ կարծես թե վոչ վոր չի յել առարկում: Բայց միայն խոսրով: Իսկ ֆաստորն գործնական աշխատանքի մեջ կինն ամեն տեղ անտես և առնվում նրանց կողմից, վորոնց ծեռքին և զանվում կոռավերացիայի դեկապրությունը, —տղամարդկանց կողմից: Սա զառն նշմարտություն է: Գետք և այդ խոստովանել: Բուրժուական հասարակության այդ անառողջ ժառանգությունը շարունակում է դեռևս նաշում գործել մեզ վրա, խեղաթյուրելով մեր գործնական աշխատանքը: Նա իրենք խոշընդուռ ընկած է այն լայն ուղու վրա, վորը տանում է դեպի սոցիալիզմ:

Յեկ իրոք: Բավական է զիմենք թվերի լեզվին այդ բանում համոզվելու համար: Կինը շատ համեստ տեղ է զրավում մեր կոռավերատիվ կյանքում: Ամբողջ Անդրկովկասում մենք ունենք ընդամենը միայն 7500 կոռավերատիվացրած կին, վորը կազմում ընդհանուր միայն 1½%-ը: Այդ թվից կոռավերացիայի մեջ ակտիվ մասնությունը են վոչ ավելի քան 2.000 հոգի, վորը կազմում է բոլոր նականությունը ավելի քան 2.000 հոգի:

Փայտատեր կանանց ընդհանուր թվի 30%-ը միայն: Ի՞նչպես ե տեղավորված այդ փոքրիկ ակտիվը կոռավերատիվ աշխատանքի առանձին նյուղերում: Կոռավերացիայի 2.000 ակտիվ աշխատավորութիւնը մոտ 500-ն ընկնում է քանիվորական խոշոր կոռավերատիվներից ժողովներին կից գտնվող «կոռավերատիվների պատվիրակային ժողովներին կից գտնվող «կոռավերատիվների սեկցիաների» կազմին, 80 հոգի աշխատում է վարչության յեկ վերահսկողության որգաններում, 500 հոգի պաշտոնավարում և կոռավերացիայի բանվորական ապարատում իրերի գործակատարութիւն, զանձապահ, զրասենյակային ծառայող յեկ այն, 380 հոգի—խամությային հանձնաժողովներում, 300 հոգի—հաշարաններում, լվացքարաններում, հացթխարաններում յեկ այն յեկ վերջապես, 240 հոգի յել հրավիրված են իբրեւ «պրակտիկանուներ»: Կինն ամենից ավելի մեծ մասնակցություն ունի քաղաքային բանվորական կոռավերատիվում: Յեկ այս համեստի յե: Այստեղ յերեվում է քաղաքների բարձր կուլտուրան, պրոլետարական հեղափոխության շնչի ուժեղ ազդեցությունը: Այսպիս, որինակ, վրաստանում մինչդեռ զյուղական կոռավերացիայում մենք ունենք կանանց 1,4% կոռավերացում, քաղաքային բանվորական կոռավերացիայում այդ տոկոսը հանում է ըստ մեջանական կոռավերացիայում այդ տոկոսը հանում է 14,1%-ի: Մյուս համբավետությունների մեջ մենք տեսնում ենք մոռավորապես նույն պատկերը:

**Ա.Ա. Թվերը լավագանց անմխիթարական են: Կարելի յե ասել, վոր կինը մեզնում գրեթե զեռեվս ակտիվ մասնակցություն ցունի նոր կոռավերատիվային աշխարհի շինարարության մեջ: Նա զեռեվս նեռու յե կանգնած մեր կոռավերատիվ կյանքի մեծ հեղեղից: Յեկ այդ չե՞ պատճառն արդյոք, վոր այդ հեղեղն այսրան պատոր է յեկ նրա մակերեսն յերեխն ծածկվում և մութ տիղմով:**

Վերցնենք մեր քաղաքային սպառողական կոռավերացիան: Վորքան նիշն և այնուամենայնիվ կնոջ մասնակցությունը նրա գորքան նիշն և այնուամենայնիվ կնոջ մասնակցությունը նրա գորքանը: Այն ինչ կին-աշխատավորություն ուսերի վրա զեռեվս ծանմեց: Այն ինչ կին-աշխատավորությունը իր սպորտությունը, հայացքներանը նա վճռում է նայելով իր սպորտությունը, հայացքներանը նա վճռում է նայելով իր սպորտությունը լուրին, իրերի հասկացողության: Յեթե նրա գիտակցությունը լուրին, իրերի հասկացողության լայն հղեանեսի շողեղով, յեթե նա սպորտած չե սոցիալական լայն հղեանեսի շողեղով,

կտրված ե ժամանակակից սոցիալական մեծ շարժման ընդհանուր հունից, նա կզնա մասնավոր առեվտրական կապիտալի ներկայացուցչի մոտ։ Յեթե նա այս բանն անի որը-որին, դրանով վերջնականապես կսպանի մեծ ջանքերով սկսված կոռպերատիվ շինարարության գործը։ Բայց նրանից ե կախված նույնպես նոր շինվող կոռպերատիվ աշխարհի համար հիմք դնելը։ Մրա համար պետք ե միայն լուսավորել նրա զիտակցությունը կոռպերատիվային իդեալների լուսով, ակտիվ գնորդ դարձնել նրան սպառողական խանութի։ Այլ կերպ ասած, դրա համար կինը պետք ե սպառողական ընկերության ակտիվ անդամ դառնա։ Այն ժամանակ սպառողական ընկերությանը նա կտա վոչ միայն իր գնողական ույժը, այլ յեվ իր գործնական խելամտությունը կյանքի առորյա գործերում։ Դարերի ընթացքում նրանում զարգացել են տնտեսական վորոշ փորձառություններ։ Նա զիտե հաշվի առնել ամեն մի կոպեկը, խնայող ե, ճշտապահ, տնարար, կարողանում ե կազմակերպել սպառողական տնտեսությունը սոցիալական այն փորբիկ բջիջի, վորպիսին ընտանիքն ե։

Ճիշտ ե, այս հատկությունների դրսեփորումը սեղմված ե յեղել «ընտանեկան-սպառողական» տնտեսության նեղ շրջանակում։ Բայց այդ կնոջ մեղքը չե, այլ նրա դժբախտությունը։ Սպառողական կոռպերացիայում, նրա աշխատանքի լայն ասպարեզում կինը կգտնի այդ գնահատելի հատկությունների արտահայտությունը, վորը զրւորդված նրա տնտեսական հաշվարքության յեվ ճշտապահության հետ իրական հիմունք կհանդիպանա կոռպերացիայի առողջ զարգացման համար։

Բայց հասարակական-կոռպերատիվային իսկական աշխատավոր դառնալու համար կինը պետք ե հաղթահարի մի չափազանց կարեվոր արգելք, վորը կանգնած ե նրա ճանապարհին։ Այդ արգելքը տնարարությունն ե։ Տնարարության սահմաններում կինն իր մեջ մշակել ե մի շարք գնահատելի տնտեսական հատկություններ։ Բայց նույն տնարարությունն ել արգելքներ և ստեղծել այն բանի դեմ, վոր նա դառնա սոցիալական եյակ։ Տնարարությունը կաշկանդում ե կնոջը, դարձնելով նրան «մանկանոցի յեվ խոհանոցի ստրուկ»։ Տնարարության շնորհիվ մեռնում ե նրա մեջ հասարակական մարդը։ Բայց սպառողական կոռպերացիան, ուր կինը կբերի տնտեսական մի շարք գնահատելի կազմության այս մեծ պրոցեսի մեջ զեղկուհի-կնոջ համար վոչ նվազ պատվավոր դեր ու «կոչում» և պատրաստված։

պես պետք ե ազատվել տնային խոհանոցի «իշխանությունից» յեվ դառնալ սոցիալական անկախ եյակ։

Այդ ուղին ամբողջ տնային տնտեսության համայնացումն ե, այսինքն կոռպերատիվ ճաշարանների, մանկանց մսուրների յեվ այն կազմակերպումը։ Այսպես, յերք սպառողական կոռպերացիան ամբողջովին ընդգրկի տնային տնտեսության բոլոր ասպարեզները, կնոջ ուսից կընկնի նրա ճնշման յեվ սոցիալական նվաստացման վերջին լուծը։ Նրա սոցիալական լիակատար ազատագրության որը կինի միաժամանակ նայել սպառողական կոռպերացիայի իսկական վերածնության որ։

Ուստի լայն ճանապարհ տվեք կնոջը դեպի սպառողական կոռպերացիան, վորի մեջ նա պետք ե դառնա իրավագործանական անդամ տղամարդու հետ համահավասար։ Կինը սպառողական կոռպերացիա կբերի նրա առողջ զարգացման համար այն անհրաժեշտ հատկությունները, վոր տղամարդը չունի։

Ուստի կնոջ անցումը կոռպերատիվային աշխատանքի բոլոր աստիճաններով, սկսած ստորինց մինչեւ ամենավերին աստիճանները, պետք ե դառնա որվա հրամայական խնդիրը, մոմենտի նշանաբանը։ Այն ժամանակ կինը ցուց կտա, թե ի՞նչ մենատի անհաջողության ե նա ընդունակ յեվ պիսի սոցիալական ստեղծագործության և նա ընդունակ յեվ վորպիսի ահազին կարելի դրսելություններ կան նրա մեջ այդ տեսակետից։

\* \* \*

Բայց նվազ չե կնոջ նշանակությունը նայեվ զյուղացիական կոռպերացիայի աջողությունների համար։ Այս կոռպերացիայի նվաստակին այն ե, վոր ոգնի զյուղացիական մանր արտադրողին ազատվել միջնորդական առելվարական կապիտալի թանգ նստող «ծառայություններից»։ Յեվ ապա աստիճանաբար, քայլ առքայլ համայնացնել նմանապես զյուղատնտեսական արտադրությունը, վորը ներկայում ցաք ու ցրիվ ե յեկած մանր ու մանրիկ, տեխնիկապես յետանաց «անկախ» արտադրական բջիջների մեջ։ Մեր յետամանաց զյուղի սոցիալիստական-տնտեսական վերակազմության այս մեծ պրոցեսի մեջ զեղկուհի-կնոջ համար վոչ նվազ պատվավոր դեր ու «կոչում» և պատրաստված։

Կնոջ նշանակությունը զյուղատնտեսական եկոնոմիկայի մեջ ահազին ե, կինն առաջին յերկրագործն ե։ Նա յեր առաջինը, վոր սկսեց հացահատիկային բույսերի մշակույթը։ Առաջին ընակարանը նույնական նրան ուսեղծել է կառուցված։ Նա յես ստեղծել

ընտանեկան «ոջախր»։ Նա յե դրել ընտանեկան-սպառողական տնտեսության—տնարարության հիմքը։ Դեռ այժմս ել տղամարդու հետ կողք կողքի յեվ հավասարապես նա ամենազործոն յեվ կենդանի մասնակցություն ունի գյուղացիական տնտեսության գրեթե բոլոր արտադրական աշխատանքներին։ Իսկ այդ աշխատանքներից մի քանիսը գրեթե ամբողջովին ընկած են նրա գիմացիուն ուսերին։ Կաթի, յուղի, պանրի արտադրությունը, կաթնասու անաստեների իննամբը, մեղվաբուծությունը, թունաբուծությունը, այս բոլորը յեվ գյուղանուեսության դարձյալ ուրիշ մի քանի կարելորագույն ճյուղեր կնոջ աշխատանքի շրջանակի մեջ են մտնում։ Նա գրաղված է նմանապես արդյունաբերական մի քանի գործերով յեվ։ — պատրաստում ե տնացին կտավ, գորգեր, խափներ, կավի ամաներ, մետաքսի զանազան գործվածքներ յեվ այլն, յեվ այլն։ Վո՞ր մեկը համարես։ Կինը—դա գյուղացիական տնտեսությունը պատող անիմին ե։ Նա այն կենտրոնական առանցքն ե, վորի շուրջը պատվում ե գյուղացիական համապետական մեծ ընտանիքի ամբողջ տնարարությունը։

Կարո՞ղ ե արդյոք գյուղացիական կոռակերացիան անցնել կնոջ մոտով, զանց առնել նրան։

Կարող ե, բայց իր հնարավոր ազողության կեսը կորցնելու ռիսկով։ Գյուղացիական տնտեսության մեջ գրեթե վոչ մի տեխնիքական բարելավում չի կարող արմատ բռնել առանց աշխատավոր-գեղջկունու ակտիվ աջակցության։ Վերցնենք, որինակ, կաթնատնտեսական արտելը։ Հայտնի յե, վոր յուղի հատկությունը պայմանավորվում ե կաթի հատկությամբ, այսինքն այն ճարպերի քանակով, վոր պարունակում ե նա։ Բայց վերջին հանգամաները գրեթե ամբողջովին կախված ե կաթնատնտեսամրից, նրա կերի հատկությունից, կթելու ծեփերից, կաթը պահելու պայմաններից յեվ այն։ Այս բոլոր աշխատանքները կատարում ե կինը։ Կարո՞ղ ե կաթնատնտեսական արտելը իր պատրաստած յուղի վորակը լավացնել, յեթե նախապես միջոցներ ծեռք չառնի, վորակի գեղջկունի-կինը կաթի արտադրության ավելի կատարելագործված տեխնիքական ծեփերի գիտակից գործադրող դառնա։ Անպայման վոչ։ Գյուղացիական կաթնատնտեսության տեխնիկան աստիճանաբար լավացնել կարելի յե այն ժամանակ միայն, յերբ բարձրացի աշխատավոր-գեղջկունու կուլտուրական մակարդակը, յերբ նա հաղորդակից լինի համայնական-կոռակ-

րատիվ աշխատանքին իրեկ ակտիվ անդամ։ Միթե նույնը չպի՞տի ասենք զյուղացիական տնտեսության մյուս նույնը վերաբերմամբ յեվս, ուր կնոջ դերը խոշոր ե։

Ուստի մենք կարող ենք ամենայն իրավամբ ասել, վոր առաց աշխատավոր-գեղջկունուն գյուղական կոռակերացիայի մեջ բաշելու գրեթե անկարելի յե տեխնիքապես բարեկավել զյուղացիական տնտեսությունը, հետեւազես յեվ վերածնել զյուղը։ Բայց յեվ աշխատավոր-գեղջկունու համար ել գյուղատնտեսական կոռակերացիան կիանդիսանա նրա կուլտուրական վերածնության արշալույսը։ Կոռակերացիայի միջոցով նա կղառնա հասարակական մարդ։ Հաղորդակից կղառնա արտաքին աշխարհին։ Կծծի ավելի բարձր կուլտուրայի թարմացնող ուր։ Նրա ճաշակները, պահանջները, սովորությունները, այսինքն նրա հին նահապետական ամբողջ կենցաղը արմատապես կփոխվի։ Այդ կենցաղին փոխարինելու կզան նոր կուլտուրան, նոր-սոցիալիստական աշխարհը, ուր կանայք տղամարդու հետ հավասարապես մարդկային կյանքի ընդհանուր դարբնոցում, իբրև իրավահավասար յեվ համարժեք անձեր, կկոփեն կուլտուրապես նորոգված յեվ ազատագրված մարդկության յերջանկությունը։

Գ. Պիտիկյան.

## ՎԱՆԱՅԻ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԽՈՒՄ ՅԵՎ ՊԱՅՄԱՆ ՆՐԱ ԴԵՄ

Կնոջ դրության խնդիրն եյապես հանգում ե կանանց աշխատանքի խնդրին:

Յեթե մենք ուզում ենք խոսել կանանց իսկական, այլ վոչ ծեփական հավասարության մասին, ապա պետք ե մի անգամ յեվս կրկնենք շատ անգամ ասվածը, թե՝ կանանց իրավահավասարությունը կարելի յե ծեռք բերել նրանց տնտեսական դրության բարելավումով, ավելի շատ թվով կանանց գործի ղնելով յերկրի արտադրության յեվ յերկրի ժողովրդական-տնտեսական աշխատանքի զանազան նյութերի մեջ:

Կանանց աշխատանքի խնդիրն ուսումնասիրելիս առանձին հետաքրքրություն ե ստանում կանանց գործազրկության խրնդիրը, մանաւլանդ վոր՝ յեթե՝ գործազրկությունն առհասարակ քանվոր դասակարգի ամենակատաղի թշնամիներից մեկն ե, ապա կանանց գործազրկությունը ավելի ահնդ յերեվույթ ե հանդիսանում, վորքան վոր նրան հետեւլում ե այնպիսի մի ծանր հետեւկանք, վորպիսին պրոստիտուցիան ե:

Վերջին տարիներս մեր զարգացող արդյունաբերությունը սկսել ե պահանջել յեվ կլանել բածր վորակավորման յեվ վոչ վորակավորման աշխատանքի բանվորական ազատ ծեռքերի մի մասը, բայց այդ հանգամանքը շատ թույլ ազդեցություն ե ունեցել կանանց գործազրկության վրա, վորը մեծ մասամբ ներկայացնում ե քիչ-վորակված յեվ վոչ-վորակված գործազրկները:

Ուրիշ խոսքով կանանց գործազրկությունը տեվական յեվ մնայուն բնույթ ե ստացել, յեվ ահա նրա չափը սահմանելու յեվ կազմը պարզելու համար, դիտենք կանանց գործազրկության վերաբերյալ տվյալները, կանգ առնելով թվերի, նրանց բնույթի յեվ նրանց դեմ պայքարելու միջոցների վրա:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԿ ԿԱՆԱՅԻ ԹԻՎԻ

Անդրկովկասում գործազրկությունը կենտրոնացած ե գր-

խավորապես կենտրոնական քաղաքներում—Թիֆլիսում, Բագվում յեվ Յերվանում:

Հիշյալ քաղաքներում առ. 1 հունվարի ներկա տարվա կար ընդամենը 10.573 գործազրկ կին, վորը կազմում ե ընդհանուր 28,828 գործազրկների 36,7%:

Ինչ վերաբերում ե գործազրկ կանանց թվին ըստ առանձին բաղադրիչների, այդ մասին կարելի յե դատել հետեւյալ տվյալներից:

Թիֆլիսում առ. 1 հունվ. 1926 թ.	կար 4170	գործազրկ.	կին կամ 33%
Բագվում	»	»	» 4990
Յերվանում	»	»	» 1413
			» 44,4%
	Ընդամենը	»	» 10.573
			» 36,7%

Չայակելով, վոր գործազրկ կանանց բացարձակ թիվն ընկնում ե գլխավորապես Բագու քաղաքին (4.990 գործազրկ), ընդհանուր գործազրկության տոկոսային հարաբերության տեսակետից ամենից շատ գործազրկ կանայք կան Յերվան քաղաքում (41,4 տոկոս) յեվ Թիֆլիսում (39 տոկոս):

Կանանց գործազրկության, դրա ամեման կամ նվազման մասին կարելի յե զարգափար կազմել հետեւյալ թվերից:

**Գործազրկությունը կանանց մեջ Ա.Ս.Թ. Ա. Գլխավոր բաղաբերում**

1923 թ. հոկտ. 1-ից մինչեւ 1926 թ. հունվարի 1-ը.

Մ ն ո ւ մ ե ր

Թվականներ	Ընդամենը գործազրկ	Դրանց թվում կանայք	Գործազրկ կանանց %
-----------	-------------------	--------------------	-------------------

**Բազու բաղաբերություն**

Առ. 1-ն հոկտեմբերի 23 թ.	19.142	6.603	34,5
» 1-ն հունվարի 24 թ.	21.487	6.846	31,9
» 1-ն հոկտեմբերի 24 թ.	9.456	3.206	33,9
» 1-ն հունվարի 25 թ.	11.101	2.896	26,1
» 1-ն հոկտեմբերի 25 թ.	19.071	3.809	37,8
» 1-ն հունվարի 26 թ.	14.725	4.990	33,9

**Թիֆլիս բաղաբերություն**

» 1-ն հոկտեմբերի 23 թ.	18.094	7.529	41,6
» 1-ն հունվարի 24 թ.	13.628	5.269	38,7

Առ 1-ն հոկտեմբերի 24 թ.	6.640	2.764	41,6
» 1-ն հունվարի 25 թ.	11.847	4.574	38,6
» 1-ն հոկտեմբերի 25 թ.	10.144	4.209	41,5
» 1-ն հունվարի 26 թ.	10.694	4.170	39,0

Յերեվան քաղաք

» 1-ն հոկտեմբերի 23 թ.	2.493	891	35,7
» 1-ն հունվարի 24 թ.	4.098	1.309	31,9
» 1-ն հոկտեմբերի 24 թ.	893	251	28,1
» 1-ն հունվարի 25 թ.	1.322	396	80,0
» 1-ն հոկտեմբերի 25 թ.	3.917	1.439	36,7
» 1-ն հունվարի 26 թ.	8.409	1.413	41,4

Ընդամենը յերեք գլխավոր քաղաքներում

» 1-ն հոկտեմբերի 23 թ.	39.729	15.023	37,8
» 1-ն հունվարի 24 թ.	39.208	13.424	34,2
» 1-ն հոկտեմբերի 24 թ.	16.989	6.221	36,6
» 1-ն հունվարի 25 թ.	24.270	7.886	32,4
» 1-ն հոկտեմբերի 25 թ.	24.132	9.457	39,2
» 1-ն հունվարի 26 թ.	28.828	10.578	36,7

1924 թվի հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակաշրջանում գործազուրկ կանանց, ինչպես յեվ առհասարակ գործազուրկների, թիվը խիստ իջնում է: Առ 1-ն հունվարի 1924 թվի Ա.Ս.ՖԽՀ յերեք գլխավոր քաղաքներում յեղած 14.843 գործազուրկ կանաց տեղ առ 1-ն հոկտեմբերի 1924 թ. յեվ առ 1-ն հունվարի 1925 թ. մենք ունենք արդեն 6.221 յեվ 7.866 գործազուրկ կին, այսինքն նվազում ավելի քան կիսով չափ, մինչդեռ տոկոսային հարաբերության տեսակետից գործազրկությունը կանանց մեջ աճել է 1,4 տոկոսով, վորովհետեւ յեթե առ 1 հունիսի գործազուրկ կանանց մնացորդը ամրող գործազրկության վերաբերմամբ կազմում էր 35,2 տոկոս, ապա առ 1-ն հոկտեմբերի Աշխատանքի Բորսայում գրանցված կանաց թիվը կազմում էր 36,6 տոկոս:

Մատնանշված յերեկոյթը վերաբերում է նույնպես կանանց գործազրկության թվերին ըստ առանձին քաղաքների:

Գործազուրկների, դրանց թվում կանանց, թվի այդպիսի նվազման պատճառը 1924 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կատարված Աշխատանքի Բորսայի գործումն էր, վորի շնորհիվ վոմանք զնզված ելին հաշվառությունից, վոմանք չներկայանալու

պատճառով, իսկ միտևսներն իբրիդ վու-աշխատավոր տարր յեվ այլն:

1925 թ. սկզբում կատարված գործմից հետո տեղի ունեցավ Աշխատանքի Բորսայի վերակազմությունը կամավոր-միջնորդական հիմունքների վրա յեվ այս վերակազմության հետեւակառով կատարված գործազուրկների վերացուցակազրումը, նմանապես յեվ գործազուրկների մի մասի հետացումը Աշխատանքի Բորսայից նորից գրեթե կիսով չափ նվազեցրեց ինչպես բոլոր գործազուրկների, այնպես յեվ գործազուրկ կանանց թիվը:

Վերջին տարում կանանց գործազրկության աճման հետ զուգընթաց, հետեւյալ թվերից անհնում ենք նույնպես գրաղված կանանց բանվորական աճում:

Զրաղված յեվ չըբաղված կանանց բանվորական ույժի հարաբերականը Ա.Ս.ՖԽՀ հանրապետության մեջ 1923—1925 թվականների միջև արտահայտվել է այսպես:

Աղբյեցանում աշխատող կանանց թիվը 1923 թ. հոկտեմբերի 1-ից աճել է 12.814-ից մինչեւ 16.787, Վրաստանում 1925 թ. հոկտեմբերի 1-ին կար 19.937 հոգի 1923 թ. հոկտեմբերի 1-ին յեղած 12.254 հոգու հանդես, յեվ Հայաստանում 1925 թվին աշխատող կանանց թիվը հասավ 3.575-ի 1923 թվին աշխատող կանանց թիվը հասավ 2.449 հոգու հանդես, իսկ վերոհիշյալ բոլոր յերեք աշխատող կանանց թիվը աճել է 1.4 տոկոսով, կիսով չափ, մինչդեռ 1-ն հոկտեմբերի 1925 թ. հասավ 40.299-ի առ 1-ն հոկտեմբերի 1923 թ. աշխատող կանանց 25.517-ի դեմ: Աճումը կազմում է 12.782 կին կամ 46 տոկոս:

Չնայելով գրաղված կանանց բանվորական ույժի թիվի մատնանշված աճումին յեվ գործազրկությունը կանանց համապատասխան նվազման պատճառը կազմում է նվազայինից գործազրկությունն իր կազմով կամ ընույթով իրեն զգացնել ե տալիս ավելի մեծ չափով քան գործազրկությունը տղամարդկանց մեջ:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԿԱՆԱՆՑ ՄԵԶ

Կանանց գործազրկության բնույթի մասին մենք կարող ենք դատել այն պրոֆեսիաներից, վորոնց վերաբերմամբ գրանցում է Աշխատանքի Բորսայում գործազրկությունը կանանց մեծամասնությունը:

Յեթե մեզնում յեղած գործազրկությունը ընդհանրապես

բնորոշվում են նրանով, վոր գործազուրկ են զիսավորապես քիչ վորակված յեվ չվորակված բանվորները (գրանցողները, գրագիրները յեվ այլն), ապա այս յերեվույթն ավելի յեվս զգացվում են կանանց մեջ, ուր գերակշիռ թիվ են կազմում պրոֆեսիա յեվ վորակում չունեցող անձերը (տնային կար անողները, կյուներուհիները, դայակները, տնային աղախները, հիվանդապահները, գրանցողներիները յեվ այլն): Թիֆլիսի, Բագվի յեվ Յերեվանի Աշխատանքի Բորսայում գրանցված գործազուրկ կանանց գրեթե կեսը վոչ մի պրոֆեսիա յեվ վորակում չունի: Այսպիսի գործազուրկ կանանց թիվը զնալով ավելանում են: Այսպիս, որինակ առ 1-ն հունվարի 1925 թ. Թիֆլիս, Բագվ յեվ Յերեվան բաղադրների բոլոր 7,866 գործազուրկ կանանց մեջ վոչ մի պրոֆեսիա յեվ վորակում չունեցող կանայք կազմում են 2.257 հոգի (կամ 28,7 տոկոս), իսկ ուղիղ մի տարի հետո, առ 1-ն հունվարի 1926 թ. հեշյալ քաղաքների Աշխատանքի Բորսաներում մենք ունենք արդեն 4.255 գործազուրկ կին (կամ բոլոր գործազուրկ կանանց 40,2 տոկոս), այսինքն գրեթե կրկնակի աճում: Այսուհետեւ բավական թվով գործազուրկ կանայք կան ծառայողութիների մեջ—գրանցող կանայք, հեռախոսի կայարաններում ծառայող կանայք, գրամերենաների վրա աշխատող կանայք յեվ դիվանականներում ծառայող ուրիշ կանայք, վորոնց թիվը առ 1-ն հունվարի 1926 թ. կազմում եր 1880 թ. առ 1-ն հունվարի 1925 թ. յեղած 1835-ի դիմաց:

Յերրորդ տեղն ըստ գործազուրկ կանանց բանակի բռնում են բժշկա-սանիտարական աշխատանքի պրոֆեսիաները, մեծ մասամբ հիվանդապահ կանայք, դայակները, սպասուհիները յեվ այլն, ուր գործազուրկ կանանց թիվն առ 1-ն հունվարի 1926 թ. կազմում են 1.190 հոգի: Այսուհետեւ զալիս են գործազուրկ կանայք կարի արդյունաբերության, կուտուր-կրթական գործունեյության (ուսուցուհիներ, գրադարանապետուհիներ, դաստիարակուհիներ յեվ այլն) յեվ սննդի աշխատավորուհիների պրոֆեսիաներից:

Այսպիսով, գործազուրկ կանայք, վորոնք աշխատանք են վորոնում Բագվում ու Թիֆլիսում, նմանապես յեվ Յերեվանում, հանդիսանում են մի կողմից պրոֆեսիա յեվ վորակում չունեցող կանայք, մյուս կողմից ինտելեկտուալական աշխատանքի կանայք, Այս հանգամանքը նշանավոր չափով բացատրում են վերեվ մատնանշված կանանց գործազրկության անշարժությունը: Ներկա-

յումս հասարակ գործ կամ խորհրդային աշխատանք զանել հաստատությունների մեջ, ի հարկե, չափազանց դժվար ե առհասարակ, իսկ կնոջ համար առանձնապես:

**Պրոֆեսիաների ամենազլավոր խմբերը կանանց գործագրկության մեջ Ա.Ս.Ֆևուչ գիտավոր բաղադրիչում**

ԳՐՈՅԵՄՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ	Գործազուրկ կանայք մնում ելին			
	Առ 1-ն հունվարի 1925 թ.		Առ 1-ն հունվարի 1926 թ.	
	Ընդամենը գործազուրկ կանայք	Ընդ- գործազուրկ կանայք	Ընդամենը գործազուրկ կանայք	Ընդ- գործազուրկ կանայք
Ընդամենը գործազուրկ կանայք				
Դրանց թվում—				
1. Մանածագործներ . . .	167	2.1	304	2.9
2. Կապի աշխատավորուհիներ	268	3.4	125	1.2
3. Սննդի » . . .	469	6.0	682	6.3
4. Կուլտ-կրթական » . . .	474	6.0	517	4.9
5. Կարի արդյուն. » . . .	486	6.2	590	5.6
6. Բժշկականիտ. » . . .	1.317	16.7	1.190	11.3
7. Խորհուրդ. տնեատ. » . . .	1.635	20.8	1.880	17.8
8. Պրոֆես. և վորակ չունեցող	2.257	28.7	4.255	40.2
9. Այլ պրոֆեսիաների . . .	793	10.1	1.050	9.8

Ընդամին պետք ե ասել վոր կանանց գործազրկության ծանր դրությունը զանվում ե վոչ այնքան գործազուրկ կանանց բանակի, այսինքն նրա մեծության մեջ, վորքան, զիսավորապես, այն բանում, վոր անգործ մնացած յեվ Աշխատանքի Բորսա ընկած աշխատավորուհու համար չափազանց դժվար ե նորից աշխատանք գտնել:

Սրա համար բավական կինի, բացի բոլոր վերոհիշյալներից, լուսաբանել նայել կանանց բանվորական ույժի պահանջի խնդիրը:

Ամբողջ 1925 թվին Թիֆլիսի, Բագվի յեվ Յերեվանի Աշխատանքի Բորսա պահանջ ե մտնել աշխատանքի ուղարկելու համար 12.472 գործազուրկ: Պահանջի այս թվից կանանց ընկույտմ ե 2.455 կամ (19,8 տոկոս) ամբողջ պահանջի մի հինգերորդ մասը, մինչդեռ զրանցված գործազուրկ կանանց թիվը տղամարդկանց համեմատությամբ, ինչպես ասվեց վերեվը, կազմում ե մի յերրորդականը (կամ 37,7 տոկոս), իսկ մի քանի տեղերում յեվ ամիսներին ավելի յեփս բարձր ե:

Աշխատանքի պահանջված կանանց թիվն առանձին բաղադրներում մենք կտևնենք հետեւյալ տվյալներից, վորոնց համաձայն կանանց բանվորական ույժի ամենից քիչ պահանջ ըստ տոկոսային հարաբերության յեղել ե Թիֆլիսում:

ՔԱՂԱՔՆԵՐ	1925 թ. պահանջ յեղել ե ընդամենը	Դրանց թվում կանանց	Ընդհանուրի %
Բագու	7.768	1.593	20,5
Թիֆլիս	4.174	763	18,3
Յերևան	530	109	20,6
Ընդամենը	12.472	2.465	19,8

Այն ժամանակ, յերբ մի տարվա ընթացքում գործազուրկ կանանց միջին թիվը Թիֆլիսում կազմում է 38 տոկոս, կանանց աշխատանքի պահանջ յեղել ե միայն 18,3 տոկոս: Գործը լավ գրության մեջ չե նայել Բագու յեվ Յերեվան բաղադրներում:

Կրկնում ենք, վոր կանանց աշխատանքի անգործադրությունը բացատրվում ե նրա ցածր վորակավորումով:

Այս յերեվույթի հետեւյանը այն ե, վոր մենք ունենք ավելի տեղական գործազրկություն կանանց մեջ, վորովհետեւ յուրաքանչյուր 100 ազատ տեղի վրա վերջին ժամանակս ընկնում եր քանի թվով 376 գործազուրկ կին ԱՍՖԽՀ բոլոր յերեր գլխավոր քաղաքներում, բնակչին Բագվում - 310, իսկ Թիֆլիսում - 613 գործազուրկ կին:

### ՊԱՅՔԱՐԸ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Կանանց գործազրկության վերեվ նկարագրված գրությունը պահանջում եր ծեռք առնել համապատասխան միջոցներ, վորոնք, ճիշտ ե, չեն կարողացել վերացնել կանանց գործազրկությունը, բայց վորոշ շափով նպաստել են նրա նվազման յեվ մի թիվ բարելավել են գործազուրկ կանանց տնտեսական դրությունը:

Գործազրկության գեմ ծեռք առնված միջոցների թվին պատկանում են հասարակական աշխատանքները, աշխատավորական կողեկանիւնների կազմակերպումը յեվ նպաստների բաշխումը ապահովագրված գործազուրկներին:

Ամբողջ Անդրկովկասում՝ անցած տարի հասարակական աշխատանքների վրա զրադված եր մոտ 15.000 գործազուրկ, դրանց թվում մոտ 750 կին, վորոնցից 350-ը մասնակցում ենին աշխատանքներին Ազգրեզանում (Բագու բաղադրում), զիմավորապես իրեկ սեվ աշխատանքներ կատարող, յեվ 400 կին—վրաստանում պետական արխիվն ու բիբլիոգրաֆիան կարգի դնելու աշխատանքներին:

Գործազուրկ կանանցից յուրաքանչյուրը աշխատում եր միջին թվով մոտ 20 որ: Ընդհանուր առմամբ աշխատված է 15.000 բանվորական որ, վորի համար վճարված ե մոտ 25.000 ռուբլի:

Հատարակական աշխատանքներին մասնակցող կանանց այդպիսի աննշան թիվը բացատրվում ե, զիմավորապես, նրանով վոր կատարվող աշխատանքներն բառ իրենց բնության հարմարեցված չենին կանացի տյելերին, իսկ մյուս կողմից Անդրկովկասի կանալը (թուրք, վրացի յեվ նայ) իրենց կենցաղային պայմանների չնորհիվ շատ ել սիրով չեն կատարում սեվ աշխատանքներ:

Այս բոլոր պայմաններում հասարակական աշխատանքներին մասնակցող կանանց թիվը կազմում եր այդպիսի աշխատանքներով զրադված բոլոր գործազուրկների 5 տոկոս:

Ուրիշ ե կանանց մասնակցության գործը աշխատանքային կողեկանիւններում: Ալստեղ արդեն կանացի կազմում են աշխատանքային կողեկանիւններում զրադված բոլոր գործազուրկների 13 տոկոսը:

Անցած տարի ամբողջ Անդրկովկասում կար գործազուրկ-

Ների 83 կոլեկտիվ, վորոց մեջ գրաղված եր մոտավորապես 5.000 մարդ, դրանց թվում 650 կին:

Առանձին հանրապետություններում կոլեկտիվների յեվ նրանց ընդգրկած գործազուրկների թիվը հետեւյալն է.

Աղքաբեզան	32 կոլ.	2150	գործգրկ.,	դրանց թվում	220 կին
Վրաստան	39 »	2200	»	»	280 »
Հայաստան	15 »	650	»	»	150 »
Հնդամենք	82 »	5000	»	»	650 »

Կազմակերպված աշխատանքային կոլեկտիվների ամենամեծ թիվն ընկնում է Վրաստանին:

Աշխատանքային կոլեկտիվների համար 1925 թվին հատկացրած 150.000 ռ. գումարի մեջ մասը ծախսված է այնպիսի կոլեկտիվներ կազմակերպելու վրա, որ ամենից ավելի գործադրվում է կանացի աշխատանք: Բավական և այս բանի համար նիշել Աշխատանքի բորսայի թիֆլիսում կազմակերպված տրիկոտաժի գործարանը, որը աշխատում է 90 տոկոս կին, յեվ վորի կազմակերպման վրա ծախսված է մինչեւ 50,000 ռ.: Բացի սրանից կան յեվ վորոց թվով որիշ աշխատանքային կոլեկտիվներ, վորոնք մեծ մասամբ գործադրում են կանացի աշխատանք, որի անկ լիազօրարան, գուլպայի արհեստանոցներ յեվ այլն:

Ինչպես յերեքում է վերեվ ասվածներից, աշխատանքային կոլեկտիվների յեվ հասարակական աշխատանքների միջոցով Խորհրդային պետությունը ոգնություն է ցույց տվել Աշխատանքի բորսաներում գրանցված բոլոր գործազուրկ կանաց գրեթե մի տասներորդ մասին:

Բացի սրանից, Խորհրդային խմբանությունը ապահովում է գործազուրկ կանաց ըստ սոցիալական ապահովագրության: Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. ամրող Անդրկովկաստմ ապահովագրված եր 1.718 կին. դրանցից Ապահովագրական Դրամարկղները նպաստ են տալիս Վրաստանում 1.020 գործազուրկ կանաց, Աղքաբեզանում՝ 484 յեվ Հայաստանում՝ 150 կանաց: Յերկաթուղային Ապահովագրական Դրամարկղը նպաստ է տվել 64 կանաց: Գործազուրկ կանաց թիվը, վորոնք նպաստ են տանում ըստ սոցապահովագրության, 1925 թվին ավելացել է 52,4 տոկոսով, 1924 թիվի համեմատությամբ. ընդ սմին այդ ավելացումը յեղել է Վրաստանում 89,2 տոկոսով, Անդրեզանում՝ 85,2 տոկոսով յեվ այլն:

Այսպիսով գործազրկության պատճառով Ապահովագրական Դրամարկղներից նպաստ ստացող կանայք կազմում են բոլոր գործազուրկ կանաց 18,2 տոկոսը, յակ բոլոր ապահովագրված գործազուրկների մեջ՝ 23,7 տոկոս:

Ապահովագրված գործազուրկ կանաց թիվը ավելանալու հետ միաժամանակ նպաստների չափն ել ավելացած է:

Գործազուրկ կինը 1924 թ. հոկտեմբերից նպաստ ստանում եր ամսական մինիմում՝ Վրաստանում՝ 5 ռ. 25 կ., Աղքաբեզանում՝ 5 ռ. 80 կ., Հայաստանում՝ 5 ռ. 25 կ., իսկ 1925 թ. հոկտեմբերից վճարվում եր ամսական մինիմում 10 ռ., Աղքաբեզանում՝ 12 ռ., Հայաստանում՝ 8 ռ.:

Այստեղից յեզրակացությունը հետեւյան ե. սոցիալական ապահովագրության մարմինները հետզինտե ավելի ու ավելի ընդգրկում են գործազուրկ կանաց, միեւնույն ժամանակ ավելացնելով ամսական նպաստի չափը: Բացի սրանից, յեթե ի նկատի առնենք ձրի բժշկական ոգնությունը, վոր ցույց է տրը վում գործազուրկ ապահովագրված կանաց, պարզ կինի ապահովագրական մարմինների մասնակցությունը գործազուրկ կանաց աջակցելու յեվ նրանց նյութական դրությունը բարելավելու գործում:

Սրանք են համառոտ գծերով ծեռք առնված միջոցները կանաց գործազրկության դեմ պայքարելու համար:

Բացի աշխատանքային կոլեկտիվների յեվ հասարակական աշխատանքների մեջ բաշելու միջոցով աշխատանքային ոգնությունը ցույց տալուց յեվ սոցիալական ապահովագրության կարգով նպաստներ տալուց, խնդիր եր դրված բարձրացնելու կանաց աշխատանքի վրավել իբրև կանաց գործազրկության դեմ մղվող պայքարի միջոցներից մեկը: Այս բնագավառում առ այժմ միայն կազմակերպչական աշխատանք և կատարվում, վորի հետևանքների մասին մենք հնարավորություն կունենանք դատելու հետազայտմ:

Պետք է միշտ հիշել, վոր կանաց մեջ տիրող գործազրկության ծանրությունը բղխում է, զիսավորապես, հենց այդ կանաց աշխատանքի ցածր վորակից: Վորակված, նախապատրաստված բանվորական ույժի պահանջն որեցոր աճում է, իսկ յեղած գործազուրկների, մանավանդ կանաց մեջ այդպիսիները կան:

Հասարակական աշխատանքներ յեվ աշխատանքային կոլ-

լնկտիվներ կազմակերպելու միջոցով Խորհրդային իշխանության կողմից գործազորկներին ցույց տված ոգնությունը, յերկրի նյութական հնարավորությունների համեմատությամբ, անպայման խոշոր ե իր չափերով։ Այդպիսի ոգնություն հետագայում յեվ ցույց կտրվի վոչ նվազ չափերով, բայց յեվ այնպես պետք է պարզ լինի մեզ համար, վոր գործազրկության դեմ մղվող պայքարի հիշյալ միջոցները հանդիսանում են իրենք գերծազրկության, մանավանդ կանանց գործազրկության սրությունն ու ծանրությունը թեթեվացնող ժամանակավոր միջոցներ։

Կանանց գործազրկության խնդրի իրական լուծումը հանդիսանում ե ինչպես աշխատող, այնպես յեվ զիսավորապես, գործազրկ կանանց ուսուցումը յեվ վերապատրաստումը, նմանապես յեվ աշխատավորուհիներին առաջ քաշելը հնագիտեածավալվող ժամանական միջուկության բոլոր նյուղերի մեջ։

Պետք ե ավելի մեծ համառություն, պետք ե, վոր իրենք աշխատավորուհիները ցանկանան ավելացնել այն պրոֆեսիաների թիվը, ուր մասնակցում են կանայք։ Ժամանակ ե դեն նետելու յեվ մի անգամ առ միշտ մոռացության տալու պրոֆեսիաների այն փակ շրջանը, ուր գործադրվում ե կոնց աշխատանքը։ Տղամարդկանց հնատ հավասարապես մենք պետք ե ունենանք կին մեխանիկներ, մոնտյորներ, շոփիքերներ, փականագործներ, ինժեներներ, բժիշկներ յեվ այլն։

Այստեղից հնատեվում ե, վոր բոլոր շահազրգութած կազմակերպությունները ծայր աստիճան անհրաժեշտ յեվ բավական մեծ աշխատանք պիտի կատարեն կանանց մեջ։

Ավելի շատ գործնական միջոցներ վերոհիշյալ ուղղությամբ, յեվ իսկական պայքարը կանանց գործազրկության դեմ իր իրական լուծումը կատարա:

#### Ա. Կառավարություն

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻՄԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵջ

Պատմության մեջ վոչ մի ժողովրդական յեվ հեղափոխական շարժում չի անցել առանց կործոն մասնակցության։ Յեվ վորքան ուժեղ ու նզոր ե յեղել շարժումը, վորքան ցայտուն ե յեղել նրա պրոլետարական բնույթը, այնքան ավելի մեծ դեր ե խաղացել նրա մեջ աշխատավոր կինը։

1789 թվի Ֆրանսիական Մեծ հեղափոխության, Արեվմուտքի 1848 թվի բուրժուական հեղափոխությունների, մեր 1905 թ. յեվ Փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխությունների մեջ կինը գրավել եր նշանավոր տեղերից մեկը։ Միշազգային ծավալով լինելիք ապագա հեղափոխությունների մեջ կինն, անկառակած, կովող պրոլետարիատի առաջին շարքերումը կիննի։

Մեր կուսակցությունը հեղափոխության առաջմարտիկն ու հիմնական առանցքն ե հանդիսանում։ Նրա խնդիրն ե իր շարքերը քաշել կին-աշխատավորին յեվ զեղչկունուն յեվ դրանով մոտեցնել սոցիալիզմի հաղթանակը։

Մնդրկովկասում, շնորհիվ ցարական կառավարության ազգային բաղարականության, վոր հիմնաված եր մանր ազգություններին հալածելու վրա յեվ նպաստում եր տնտեսության հին նախավետական-Գյողալական ծեմբերի յեվ կենցաղի պահպանմանը, կինն ավելի կրագորական յեվ յնտամնաց եր, քան մեր Միուկինն ամացած մասերում։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, թյան մանացած մասերում։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, մեր արմատից բանդեց կապիտալիստական հիմնությունները, ակտիվ գործունեյության ասպարեզ հանեց նայեվ Անդրկովկասի աշխատավորություն։

Խորհրդայնացումից ի վեր Աշխատավորուհիների յեվ Գեղջկուհիների Բաժիններին աջողվեց ցնցել աչքաթող արված, յեկանական կանանց մասամները յեվ հետաքրքրություն զարթեցաւ կանանց մասամները հասարակական-քաղաքական կյանքը։ Այս տեսակետից խոշոր հնատեվանքների համեմելով, մեր առջիվ ահազին խնդիր կա—կնոցը քաշելու մեր կուսակցության շարքերը։

Այս ուղղությամբ կատարված աշխատանքի թուլությունը յերեվում է հետեւյալ տվյալներից: Այսպես, մեր Միության մեջ կուսակցության կին-անդամները կազմում են 10 տոկոս, իսկ Անդրկովկասում այդ տոկոսն ավելի քիչ ե:

Առ 1-ն հունվարի 1924 թ. 26.341 կոմմունիստներից կանայք 1.197 հոգի ելին, այսինքն 4,5 տոկոս:

1924 թվին կուսակցության մեջ լինենյաններին ընդունելը իցեցրեց մեզնում կանանց տոկոսը: Առ 1-ն հունվարի 1925 թ. տվյալների համաձայն 41.582 հոգի կոմմունիստների ընդհանուր թվից մենք ունենք 1.749 կին, այսինքն 4,2 տոկոս: Այսպիսով, լինենյան կոչի ընդունելության հետեւանքով, կուսակցության մեջ կանանց բացարձակ աճման հետ միասին, տոկոսային նվազումը հասել է 0,3 տոկոսի: Այս ցույց ե տալիս, վոր 1924 թվի ընթացքում մենք չենք կարողացել բավարար չափով աշխատավորուհուն ու գեղջկուհուն կուսակցության մեջ բաշել: 1925 թվի ընթացքում նկատվում է կանանց թվի մեծ աճում կուսակցության մեջ: Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. 50.160 հոգի կոմմունիստների ընդհանուր կազմի մեջ կանանց թիվը եր 2.561 հոգի, այսինքն 5 տոկոս: Այդ տարին տվալ կանանց վոչ միայն բացարձակ աճումը կուսակցության մեջ, այլ յեվ տոկոսային աճում:

Ըստ առանձին հանրապետությունների կանանց աճումը կուսակցության մեջ արտահայտվում է հետեւյալ թվերով.

#### Վրաստանում կար՝

Առ 1/1 1924 թ. 554, այսինքն 4,7% կոմմունիստ. ընդհ. կազմից

» 1/1 1925 թ. 766, » 4,7 » » »

» 1/X 1925 թ. 158, » 4,5 » » »

Բացարձակ աճումը 1924 թ. հունվարի 1-ից մինչեւ 1925 թվի հունվարի 1-ը կազմում է 614 հոգի, այսինքն 90,2 տոկոս:

#### Ադրբեյջանում կար՝

Առ 1/1 1924 թ. 540, այսինքն 5,1% կոմմունիստ. ընդհ. կազմից

» 1/1 1925 թ. 848, » 4,1 » » »

» 1/X 1925 թ. 1.121, » 4,9 » » »

Բացարձակ աճումը 1924 թ. հունվարի 1-ից մինչեւ 1925 թվի հունվարի 1-ը կազմում է 581 հոգի, այսինքն 91,9 տոկոս:

#### Հայաստանում կար՝

Առ 1/1 1924 թ. 103, այսինքն 2,5% կոմմունիստ. ընդհ. կազմից

» 1/1 1925 թ. 135, » 2,8 » » »

» 1/X 1925 թ. 272, » 4,1 » » »

Բացարձակ աճումը 1924 թ. հունվարի 1-ից մինչեւ 1925 թվի հունվարի 1-ը կազմում է 169 հոգի, այսինքն 60,9 տոկոս:

Իսկ ամբողջ Անդրկովկասում կանանց թիվը կուսակցության մեջ աճել է 1924 թ. հունվարի 1-ից մինչեւ 1925 թվի հունվարի 1-ը 1.364 հոգով, այսինքն 87,8 տոկոսով:

Կուսակցության մեջ յեղած Անդրկովկասի աշխատավորուհիների այդպիսի քիչ տոկոսը մի ավելորդ անգամ յեկս թելադրում է, վոր աշխատավորուհուն յևլ գեղջկուհուն կուսակցության մեջ բաշելը մեր հարվածային խնդիրն է հանդիսանում: Սրա համար, կնոջ կուլտուրական-քաղաքական մակարդակը բարձրացնելու ընդհանուր աշխատանքի հետ միատեղ, անհրաժեշտ է թեթեվացնել նրա համար յեվ մինչեվ մինիմում հասցընել այն բոլոր ծելվականությունները, վորոնք պահանջվում են կուսակցության մեջ մտնելու համար:

Վ. Զակրժեվսկի

## ԱՂՋԻԿԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՌՅԱՆ ՄԵԶ

Այն խնդիրը, թե ինչպես պետք է լերիատարդ սերնդի կանացի մասը մտցնել կոմյերիտմիության մեջ, ինչպես պետք է կրթել նրան, հաղորդակից անել սոցիալիստական շինարարության ընդհանուր աշխատանքին, միշտ կազմել և կուսակցության յեվ կոմյերիտմիության ուշադրության կենտրոնը:

Անդրկովկասում դարերի ընթացքում դասավորված սոցիալիստ յեվ կենցաղային պայմանները այնպիսի հարաբերություններ են՝ ստեղծել տղամարդու յեվ կնոջ միջեվ, վորոնց մեջ բնակչության կանացի մասը զանել հասակից արդեն պահպում եր փակ, մեկուսացած շրջանում, հասարակական կյանքից հեռու յեվ դաստիարակվում տղամարդուն անտրունջ, ստրկաբար նաշանդվելու վրգով:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, քանդելով տղամարդու յեվ կնոջ միջեվ յեղած հին, ստրկական հարաբերությունների բոլոր հիմքերը, կնոջը իրավահավասար մասնակցող դարձեց կոմմունիստական նոր հասարակության:

Հոկտեմբերյան հեղափոխության հետեվանքով կին-աղջկակազմակերպության յեվ կոմմունիստական դաստիարակության համար առանձնապես մեծ դեր ստանձնեցին կոմյերիտմիությունը, կուսկումներին կից կինքաժինները, իսկ ներկայումս յեվ պիոներական կազմակերպությունները:

Բայց այս կազմակերպությունների աշխատանքի մեջ վերեվ հիշված կենցաղային պայմանները գեռեվս հաճախ այնքան զորեղ են հանդիսանում, վոր աղջկանց գրավելու յեվ մանափանդ նրանց դաստիարակելու գործում մեծ նվաճումներ ունենալ ցի կարելի յեվ հարկադրված պիտի լինենք բավականալ քուով:

Աղջիկը հաճախ ցի մտնում Միություն վոչ թե նրա համար, վոր անգիտակից և, այլ նրա համար, վոր ընտանելան, տնտեսական կենցաղի յեվ ծնողների կողմից արգելներ են հարուց-

վում նրա դեմ, մանավանդ մեր կուլտուրապես յետամնաց գյուղում:

Ահա թե ինչու Միությունը ստիպված է աղջկանց մեջ աշխատելու համար ընտրել այն ուղին, վորով նա զնում է այս բոպեյին, այսինքն կուսակցականների, կոմյերիտականների յեվ մեզ մոտիկ գտնվող, հասարակական կյանքին ակտիվ կերպով մասնակցող բանվորների յեվ գյուղացիների բույրերի, աղջիկների յեվ այլ ազգականունիների միջոցով աշխատելու ուղիով:

Ի՞նչ անում է ունեցել կոմյերիտմիությունն աղջիկների հաշվին:

Ամբողջ Անդրկովկասում Միությանն անդամազրված են առ. 1-ն հունվարի 1925 թ. ընդհանուր առմամբ 11,927 աղջիկ: Իսկ յեթե մենք դիտենք այս անման դինամիկան ավելի յերկարատեսք ժամանակամիջոցում, կատանանք հետեւյալ պատկերը.

Առ. 1-ն մայիսի 1922 թ. Անդրկովկասում Միության մեջ ունեցինք 982 աղջիկ, Միության անդամների ընդհանուր թվի 3,9 տոկոսը:

Առ. 1-ն հունվարի 1923 թ.—1,320 հոգի կամ 5,2 տոկոս. առ. 1-ն հունվարի 1924 թ.—1,586-ը. կամ 4,9 տոկոս. Ու համազումարի ժամանակ, այսինքն առ. 1-ն հունիսի 1924 թ. մենք ունեցինք արդեն 2,654 հոգի կամ 5,9 տոկոս, իսկ այժմ, այսինքն առ. 1-ն հունվարի 1926 թ. ունենք արդեն 11,927 հոգի կամ Միության անդամների ամբողջ թվի 12,1 տոկոսը:

Ինչպես յերեվում է այս թվերից, 1923 թ. հունվարի 1-ից մինչեվ 1926 թ. հունվարի մեկը մեր անել ենք 9 անգամ, 1,320 հոգուց դարձել ենք 11,927 հոգի:

Ահա աղջիկներին գրավելու նկատմամբ այն թվական նվաճումը, վոր ունեցել է կոմյերիտմիությունը Անդրկովկասում Խ համազումարի համար կատարած դժվարին ու համառ աշխատանքից հետո:

Իսկ յեթե անումի դինամիկային հետեւյանք ըստ առանձին հանրապետությունների, կատանանք հետեւյալը. (Այսուակը տես 44 էջ)

Ինչպես յերեվում է այս թվերից, վորոնք վերաբերում են առանձին հանրապետություններին, աղջիկների անումը Միության մեջ յերբեք չի դադարել, իսկ վերջին տարիներս առանձնապես բուռն ե յեղել:

Գերցնելով այս թվերը ըստ ուրիշ նշանի, այն ե՛ ըստ աղջկության, մասնավորապես գրաստանի վերաբերմամբ մենք կը-

**ԼԿՅԵՄ աղջիկների աճումը հանրապետություն ներում**

ՏԱՐԻՆԵՐ	ԱԴՐԲԵԶԱՆ			ՀԱՅԱՍՏԱՆ			ՎՐԱՍՏԱՆ		
	ՀԱՂԱՀ ՆԱՌ ՊԱՍԻՒՐ	ԴՐԱՆՑԻ ՐԱՑ. Թ. %	ԴՐԱՆՑԻ ՆԱՌ ՊԱՍԻՒՐ						
	ՀԱՂԱՀ ՆԱՌ ՊԱՍԻՒՐ	ԴՐԱՆՑԻ ՐԱՑ. Թ. %	ԴՐԱՆՑԻ ՆԱՌ ՊԱՍԻՒՐ						
1 հունվ 23 թ.	6725	423	6,3	6676	303	4,6	12039	594	4,9
1 " 24 թ.	11125	535	4,8	5800	184	3,2	15147	867	5,7
1 հունիս 24 թ.	15538	941	6,2	7806	397	5,1	21375	1316	6,2
1 հունվ. 25 թ.	27038	2063	7,7	11383	821	7,2	27038	2063	7,7
1 " 26 թ.	38230	4000	10,5	13425	1413	10,6	47269	6514	13,8

տեսներ, վոր ազգային գրեթե բոլոր խմբակներին պատկանող աղջիկները Միության մեջ մտած են համեմատական չափով այսպես. առ 1-ն հունվարի 1926 թ. Միության մեջ ընդհանուր թվից ունենք վրացունի 4.104, հայունի 561, թրքունի 115, ոսունի 879, արքազունի 24, աջարունի 2 (այստեղ շատ բիշ ե), ոսունի 637, հույն աղջիկներ 61 յեվ ուրիշ ազգ. 105 հողի:

Բազմում ունենք վրացունի 2, հայունի 161 (անբավարար), թրքունի 424, ոսունի 594 յեվ ուրիշ ազգ. 96 հողի:

Բայց Կոմյերիտմիության մեջ աղջիկների 12,000-ոց բանակ ունենալով, հարց ե ծագում, թե ո՞ւր են տեղավորված նրանք:

Նրանք տեղավորված են զանազան խմբակներում, ինչպես ընդհանուր ակումբներում, այնպես յեվ հասուն կանանց ակումբներում, աշխատանքի յմն լծվում հասարակական կազմակերպությունների, բյուրոների յեվ բժիշների մեջ, աշխատանք ին վարում պիտներների հետ, մասսամբ արտադրության մեջ (գործարանային դպրոցներ, գործարաններ, բրիգադային աշակերտություն), իսկ վոմանք, — նիշտ ե, աննշան մասը, — յեվ միութենական գեկավար աշխատանքի յեն դրվում վճարով (զավկոմներ, ռայկոմներ):

Աղջիկների մեծ մասը քաղաքում քաշված ե նայեվ ուսման: Նրանք քաղաքականապես յեվ հասարակականապես զարգանում են: Բայց յեվ այնպես մենք այս բոպեյին ել ունենք, մանա-

վանդ Միության մասսայի մեջ, այնպիսի դրություն, յերբ աղջկա առաջաղիմությունը կապված ե մեծ դժվարությունների հետ:

Հաճախ սրա պատճառը հանդիսանում ե արհամարհական վերաբերմունքը դեպի նա, յեվ վոչ միայն կոմյերիտականների, այլ յեվ հասակավոր բանվորների, մանավանդ զյուղացիների կողմից:

Անա թե ինչու շարունակելով աղջիկներին Միության մեջ բաշելու աշխատանքը, պետք ե լուրջ ուշադրություն դարձնել այդ արգելքները արմատախիլ անելու վրա:

Սրա մեջ ե կայանում Միության հիմնական խնդիրն աղջիկների մեջ աշխատելու նկատմամբ:

**Ա. Կուչերով**

## ԱՆԴԻԿՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՊԻՌՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵԶ

Անդրկովկասի կուսակցական, կոմյերիտական յեվ պիոներական կազմակերպությունների սեռային կազմը դիտելիս աչքի յե զարնում մի շատ հետարրբարական յեվ նշանագոր փաստ.— կանայք կուսակցության մեջ կազմում են 5 տոկոս, հասուն աղջիկները կոմյերիտակության մեջ 11,3 տոկոս յեվ փոքրահասակ աղջիկները պիոներական կազմակերպությունների մեջ 29,6 տոկոս։ Պիոներների առանձին կազմակերպություններ, որինակ թիֆլիսինը, ավելի յեվս մեծ տոկոս են տալիս (38,58 տոկոս), իսկ մի շարք կոլլեկտիվներ իրենց տեղեկագրերի մեջ գրում են, թե փոքրահասակ աղջիկների քանակը գերազանցում է տղաների քանակից, ընդունմին իրենց ակտիվությամբ նրանք ավելի բարձր են կանգնած, քան տղաները։

Այս բոլորն, ի հարկե, ունեն իրենց խոր պատճառները։ Յեթե Անդրկովկասի կենցաղը 14—15 տարեկան արջկա առջևվ փակում ե վորեվի հասարակական կազմակերպության դռները, ապա մոտեցումն դեպի 8—12 տարեկան արջիկը այլ տեսակ ե յեվ նույնիսկ ամենախստաբար ծնողները շատ հայիւ ե պատճում, վոր առարկեն նրա պիոներական կոլլեկտիվ մտնելու դեմ։ Նույնիսկ Աղրբեջանը, ուր այս խնդիրն առանձնապես սուր ընույթ ունի, պիոներական կազմակերպության մեջ ե առել 20 տոկոս փոքրահասակ աղջիկների. ընդունմին դրանց 21,8 տոկոսը թրբունիներ են։ Այս թվերը վկայում են, վոր վորքան հասակով փոքր ե բնակության այս կամ այն մասի կազմը, այնքան նա ազատ ե կենցաղային մի շարք նախապաշտումներից, այնքան ավելի հեշտությամբ ե նրա մեջ պատվաստվում դաստիարակչական աժամատանքը։ Պիոներական կազմակերպության մեծ աճումը փոքրահասակ աղջիկների, զիսավորապես արմատական ընակության յերեխաների հաշվին՝ հույս ե տալիս դյուրությամբ լուծելու մեր «կանանց պրոբլեմը», նախապատրաստե-

լու կոմյերիտամության յեվ կուսակցության համար ապագա կադրեր։ Այս ավելի յեվս հաստատվում ե նրանով, վոր նույնիսկ այժմ մի շարք գյուղերում կոմյերիտական բջիջների աճումը փոքրահասակ աղջիկների հաշվին տեղի յե ունեցել զիսավորապես կոմյերիտամությանը պիոներուների հանձնելու միջոցով։

Այս բոլորը հաստատում ե այն, վոր փոքրահասակ աղջիկների մեջ պիոներների գարած աշխատանքին ավելի մեծ ուշադրություն պիտի դարձնել քան մինչեվ այժմ, յեվ այդ խնդիրը պետք ե քննության առարկա դառնա մեր կուսակցական կազմակերպությունների մեջ։

Մեծ դժվարություններ են նարուցանում կազմակերպչական ընույթ ունեցող խնդիրները։ Դեռ յեվս կան կազմակերպություններ, վորոնք առարկում են փոքրահասակ աղջիկների առանձին կոլլեկտիվներ ստեղծելու դեմ, անդեւով խառն կոլլեկտիվների յեվ ողակների վրա։ Սա անպայման սխալ ե յեվ լուրջ սխալ։ Առաջ քաշել «հեղափոխական» թերթիաներ յերեխաների միատեղ կրթության մասին (վորի դեմ սկզբունքով վոչ վոր չի առարկում) նշանակում ե աչքերը փակել մնացած պիոներկովկասի գյուղի կենցաղի վրա, նշանակում ե հաշվի չառնել մ.ր տեղական ազգային պայմանները։ Պահանջել մի զյուղացուց, վորը իր կնոջը պահում ե չաղքայի տակ յեվ իր համար նվաստություն ե համարում նրա հետ միասին նաշի նստել այդպիսի մի գյուղացուց պահանջել, վոր նա իր աղջկան ուղարկի խառն յեվ այն ել պատճանի կոմյերիտի ղեկավարությամբ աշխատող կոլլեկտիվ, ի հարկե, չի կարելի։ Այստեղ մոտեցումը պետք ե լինի ավելի զգույշ ու տակտով։ Մենք պետք ե առաջին հերթին գյուղերում, իսկ վորոնդ պահանջում են պայմանները՝ նայեվ քաղաքներում, ստեղծենիր աղջիկների առանձին կոլլեկտիվներ կոմյերիտունի-աղջրկա ղեկավարությամբ։ Այդ կոլլեկտիվի աշխատանքը դրված պետք ե լինի այնպես, վոր միշտ նկատի առնվեն տվյալ ազգության կենցաղային առանձնահատկությունները յեվ աշխատանքի ձեւելուն ու մեթոդները մի քիչ տարբերվեն տղաների մեջ կատարվող աշխատանքի ձեւելուից յեվ մեթոդներից։ Սրա հետ միասին պետք ե կանոնավոր, ընկերական փոխհարաբերություններ հաստատել տղաների հետ յեվ զրավել ծնողների համակրանքը։

Հետեւյալ ետապը պիտի լինի աղջկանց կոլլեկտիվները տղաների կոլլեկտիվների հետ միացնելը, բայց ողակները բաժանված պետք ե լինեն բայտ սեռային նշանի։

Յեվ, վերջապես, վերջին ետապը պետք է լինի կազմակերպչական ստրուկտուրայի կատարյալ կիրառումը:

Այս բոլորը պետք ե լինի յերկար ժամանակի համար յեվ հետեւանք պիտի լինի կանոնավոր հիմքերի վրա դրված դատիարակչական աշխատանքի:

Ավելի յեվս բարդ ե աղջիկների մեջ կատարելիք աշխատանքի բովանդակության խնդիրը: Խնչակ ասվեց վերեվը, անհրաժեշտ ե այդ աշխատանքը հարմարեցնել աղջկանց պահանջներին յեվ այն կինցաղային առանձնահատկություններին, վորոնք բնորոշ են տվյալ ազգության համար:

Աղջկանց կոլլեկտիվների ուշադրության կենտրոնը պետք ե դառնա աշխատանքը ընտանիքի մեջ. ընդունին պետք ե ոգնել մեր աշխատանիքին յեվ առհասարակ պետք ե ծեռք բերել միշտը աշխատանիքային փորձառություններ: Ծնողների վատահությունն ու համակրանքը ծեռք բերել կարելի յեվ միայն գործով մասնակցելով նրանց ընտանիկան աշխատանիքին յեվ կազմակերպված ոգնություն ցույց տալով նրանց:

Թույլ չպետք ե տալ, վոր պիոներները, մասնավորապես աղջիկները, կտրվեն տնային աշխատանիքից (մանավանդ քաղաքներում), մի քան, վոր հարուցանում ե ծնողների դժգոհությունը յեվ վորի համար տրտնջում են պիոներական կազմակերպության դեմ:

Միեվնույն ժամանակ աղջկանց կոլլեկտիվների մեջ դատիարակչական ներքին աշխատանիքը պետք ե կազմակերպված լինի այնպես, վոր ամրանան նրանց ընկերական հարաբերությունները տղաների հետ, իսկ ուր այդ չկա, սահմանվեն այդպիսի հարաբերություններ: Տղաների կոլլեկտիվները պետք ե հասկանան, վոր իրենք պետք ե ոգնեն աղջիկներին յեվ այդ ոգնությունը պիտի ցույց տան իրենց ամբողջ աշխատանիքի ընթացքում:

Աղջկանց հետ պարապելու մեթոդի յեվ բովանդակության խնդիրն այնքան մութ ե յեվ չմշակված, վոր պետք ե ուշադրության առարկա դառնա մեր կինբաժնների հանձնաժողովների, կոլլեգիաների յեվ այլ որգանների համար, վորոնց միջոցով կացողվի այդ խնդիրը մի քիչ ավելի մանրամասնորեն մշակել:

Վերջին խնդիրը—դա պիոներական կազմակերպությունների աշխատանիք մեջ կինբաժնի ունենալիք մասնակցության խնդիրն ե: Դա այնքան լուրջ խնդիր ե, վոր պահանջում ե առանձին

հողված, բայց մասնակի կերպով շոշափել այն՝ անհրաժեշտ ե: Այն բոլոր կազմակերպչական յեվ դաստիարակչական աշխատանքը, վորի մասին խոսվեց, անկարելի յե առանց կինբաժնի կամ առանձին կին-կազմակերպչությների ակտիվ մասնակցության յեվ ոգնության: Նրանք պետք ե մշտական աշխատանք կատարեն բնակչության մեջ, մանավանդ մայրերի շրջանում, ազիտացիա անելով յերեխաներին, մասնավորապես աղջիկներին կոլլեկտիվներն ուղարկելու ոգտին: Նրանց դերը պետք ե լինի յեվ այն, վոր աղջկանց կոլլեկտիվների համար ընարեն համապատասխան գեկավարությներ (Կոմյերիտմիության հետ միասին) յեվ առաջ քաշեն այդ կոլլեկտիվների համար յեռանդուն, բանիմաց ներկայացուցիչների:

Բայց նրանց հիմնական աշխատանիքը—դա կոմյերիտմիությանը իրենց խորհուրդներով ոգնեն ե: Մեթոդական կոլեգիաներում, ղեկավարների սեմինարիաներում, պիոներների բյուրոներում կինբաժնի աշխատավորները պետք ե ոգնեն կոմյերիտներին հաղթահարելու աշխատավորների հարցուրավոր յեվ հազարավոր յերեխաների դաստիարակության դժվարին ու լուրջ գործը:

#### Է. Շախման

## ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄԱՋՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅՄԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

Յերեխաների խնամազրկությունը ծնվել ու աճել է իմպերիալիստական յեվ քաղաքացիական պատերազմների հողի վրա, —պատերազմներ, ուր ամենից ավելի սպանվեցին յեվ տուժեցին բանվորներն ու գյուղացիք: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ ցարական կառավարությունը նրանց վերցնում էր իբրեւ թնդանոթային միս, վորպեսզի բանվորների յեվ գյուղացիների հաշվին աներ իր կապիտալիստական, ավազակային գործը: Իսկ քաղաքացիական պատերազմում, հերոսարար պաշտպանելով Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները ներքին ու արտաքին թշնամիների դեմ, մահացան հազարավոր յեվ տասնյակ հազարավոր անձնազոհ բանվորներ ու գյուղացիներ, յեվ սրանց զավակներն են, վոր այժմ կազմում են խնամազրկուների կադրը: Ամենը հիշում են 1921 թվին Խորհրդային Ռուսաստանին հասած տարերային սոսկալի աղետը, վորի յերեխից հազարավոր յերեխաներ ցաքուցրիվ յեղան յերկրի չորս կողմերը ոթեվան, կերակուր յեվ գուրզուրանը գտնելու համար: 1921 թվին Խորհրդային Միության մեջ հաշվվում եր մի քանի միլիոն խնամազրկուների յերեխա: Այս տարիների ընթացքում նրանց գրեթե 50 տոկոսը զիմացավ գոյության կովին յեվ մահացավ: Շինարարության ընդհանուր վերելքի այս տարիների ընթացքում Խորհրդային իշխանությունը լարել եր իր բոլոր ույժերն ու միջոցները այդ յերեխաների մի մասը պահելու յեվ դաստիարակելու համար: Յեզ մենք գիտենք, վոր Խորհրդային պետությունն այդ յերեխաներից տասնյակ հազարավորների վերցրել պահում է մանկատներում իր հաշվին. նա կերակուր, հագնում, դաստիարակում, ուսում է տալիս, բժշկում, մի խոսքով՝ կրթում և նրանց ֆիզիքապես յեվ զաղափարապես նոր կոմմունիստական հասարակության համար: Այս բանը պետությունն իրագործում է կուսավորության յեվ Առողջապահության Կոմի-

ուարիատների միջոցով: Բայց նրանցից դեռ հարյուր հազարավորներ թափառում յեվ մուրացկանություն են անում ամբողջ Միության խոշոր քաղաքներում, հավաքվելով յերկաթուղային կայարաններում, հրապարակներում, շուկաներում, մեծ փողոցներում յեվ յենթարկվելով վերջնականապես այլասերվելու վտանգին, սպառնալով պետությանը հակա-սոցիալական վտանգավոր տարր դառնալու: Այդ խնամազրկուները տնտեսական յեվ կիմայական տևակետից իրենց սիրած տեղերն ունեն, ուր յեվ դիմում են նրանք խմբերով: Վրաստանը յեվ մասնավորապես Թիֆլիսը, Տաթումբը, Սուխումը, Փոթին այդպիսի կինտրոններ են հանդիսանում նրանց համար: Սոցիալապես անխնամ մասցած այդ յերեխաները բնավորության շատ բացասական հատկությունների հետ միասին, վոր նրանք ստացել են փողոցային կյանքից, ազարտից, ալկոհոլից, նարկոգից, վեներական հիգանդություններից, ունեն նայել այնպիսի վնահատելի հատկություններ, վորոնք հաստատ գրավական տարիս մեզ, թե կանոնավոր մոտեցումով, նրանց կյանքի կանոնավոր կազմակերպությունների յեւ նրանց դարձնել լավ քաղաքացիներ, տոկուն մարտիկներ նոր ապազալի համար, վորովհետել նրանք համարձակ են, ուստի նաև, նկուն, գործնական, ունեն ընկերական համերաշխություն, առում են ունեվորներին յեվ արհամարհում մեշչանական բարոյախոսությունը:

Խնամազրկուների յերեխանց բնակչության ամենից ավելի թույլ մասը, այսինքն 1 ։ 3 տարեկան մանուկները վատ են բնգրրկված Առժողկումատի հիմնարկների կողմից, շատ քիչ են մանկատները յեվ քիչ են ծծկեր մանուկներ ունեցող մայրերին հատկացված հաստատությունները: Լուսժողկումատն ավելի շատ հիմնարկներ ունի խնամազրկների համար: Այս բոպելին Վրաստանում կան 5000 յերեխաներ, վորոնց ամբողջովին պահում խնամում է պետությունը, բայց, ի հարկե, միմիայն պետության ույժերով հաղթահարել այդ ահազին աղետն անկարելի յե, դժվար է: Այստեղ անհրաժեշտ է յուրաքանչյուր քաղաքացու, յուրաքանչյուր աշխատավորուն յեվ գեղջկունու ոգնությունը: Այս բոպելին Խորհրդային Ռուսաստանում անզավակ կամ քիչ զավակներ ունեցող բանվորներն ու գյուղացիները մանկատներից վերցնում են իրենց մոտ խնամազրկ յերեխաներին յեվ նրանց հետ վարդում ինչպես իրենց ընտանիքի անդամների հետ: Այս բանն անվանվում է պատրոնություն: Մեզնում

մանկատներում կան 14—15—16 տարեկան պատանիներ, վորոնք կատարելապես զբագետ են, առողջ, սովոր են մաքրության յեվ աշխատանքի յեվ հաճախ լավ զիտեն նայեվ վորեվե արհեստ: Ահա այդպիսիներին պետք է մասամբ աշխատանքի դնել արտադրական ծեռնարկների մեջ, նրանց մի մասին պետք է վերցնեն իրենց մոտ ընտանիքները, մանավանդ գյուղացիական ընտանիքները, վորոնց նրանք ոգուական, վորովնետեվ վարժված են աշխատանքի յեվ կմասնակցեն ընտանիքի գյուղատրնտեսական աշխատանքին: Բացի սրանց, յերեխաների մի մասը ծնողներից զրկվում է վաղ հասակում յեվ հաճախ նրանց գույրերին տիրամում ե մոտիկ կամ հեռավոր ազգականը, վորով յերեխաներն յենթարկվում են իրեվ վորբեր փողոց շարտվելու վտանգին: Պետք է վոր աշխատավորն ու գեղզուին, մանավանդ պատվիրակուին, հնտամուտ լինի այդպիսի յերեվուլթներին յեվ իր խնամակալության տակ առնի այդպիսի յերեխաներն կամ թե նրանց համար գտնի այնպիսի մի ազնիվ խնամակալ, վորը վորքի գույքը կգործադրի նրա դաստիարակության յեվ կրթության վրա: Այս ել խնամազուրկներին ոգնելու ծեփերից մեկն ե: Վերջին ժամանակս գյուղից բազաք են վազում բազմաթիվ վորբեր յեվ կիսավորբեր, պետք է վերջ տալ այդ բանին, պետք է վոր տեղական գործկոմները, գյուղխորհուրդները յեվ մանավանդ պատվիրակուիները լուրջ պայքար մղեն խնամազրկության դեմ՝ խնամազուրկներին աշխատանքի դնելով խնամակալություն հաստատելով նրանց վրա, պատրոնության տալով նրանց, կազմակերպելով «Յերեխանց բարեկամների» ընկերություններ, վորոնք կողնեն այդպիսի յերեխաներին յեվ պատանիներին: «Յերեխանց բարեկամների» ընկերության յուրաքանչյուր անդամ պետք է աշքից ընուացնի թափառաշրջիկ յեվ մուրացիկ զարձած վորը կամ կիսավորը յերեխայի ու պատանու յեվ պետք է կուվի այդ յերեվուլթի դեմ՝ աշխատանքի դնելով խնամազուրկին: «Յերեխանց բարեկամները» մեծ ոգուած կարող են տալ խնամազուրկներին վոչ միայն այն ժամերին, յերբ բացառապես աշխատում են նրանց համար, լողացնում են նրանց, հազուատ են կարում նրանց համար, պարապում են նրանց նետ, աշխատում են նրանց նաշարաններում, — այլ յեվ իրենց առորյա կյանքում, յերբ պետք է պրոպագանդ անեն աշխատավորական լայն մասսաների մեջ խնամազուրկներին ոգնելու անհրաժեշտության մասին, անդամներ պիտի նարեն

«Յերեխանց բարեկամների» ընկերության համար, նմանապես յեվ պիտի զանան, վոր կոռպերատիվները, գյուղկոմները յեվ այլ հասարակական կազմակերպությունները ոգնեն վորբերին, կիսավորբերին յեվ այլն՝ ծառայության ընդունելով նրանց յեվ բանալով նրանց համար հաստատություններ յեվ արհեստանոցներ:

Կոմյերիտականները քաղաքում յեվ գյուղում շատ բան կարող են անել խնամազուրկներին կուլտուրապես դաստիարակելու, մանուկ մերունդը այլասերումից գերծ պահելու գործում: Այս աշխատանքի մեջ կոմյերիտականը յեվ պատվիրակուենին պետք է միասին լինեն: Այս բոպեյին փողոցում գտնվող յեվ մեր ամբողջ հանրապետության մեջ թափառող յերեխաներն ու պատանիները բանվորների յեվ գյուղացիների զավակներ են. նրանց վիճակի մասին, այն մասին, վոր նրանք վոճրագործներ, գողեր յեվ պետության թշնամիներ ըգառնան, պետք է մտածենք մենք, Խորհրդային հանրապետության բոլոր ազնիվ քաղաքացիները: Պատվիրակուենին, իրեվ նոր կոմմունիստական հասարակության շինարարության մասնակից, պետք է լուսավորի մանկական կյանքի բոլոր մութ անկյունները յեվ յերեխանց խնամազուրկության անհուն ծովից փրկի այն ամենը, ինչ վոր կարելի յե:

**Մարիա Ռուխելասվիթի**

## ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՎ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ

**Մայրության յեվ մանկության պահպանությունը** Վրաստանի յեվ Հայաստանի համար նոր կազմակերպություն է: Դա հանդիսանում է իրենվ տրամաբանական հետեվանք իրերի այն աննորմալ դրության, վորք պահնաջում եր անմիջականորեն պայքարի յենել մանկական բարձր մահացության դեմ:

Դեռ յեվս համաշխարհային պատերազմից շատ առաջ յեվրոպական պետությունների մեծամասնության առջեվ սկսեց ցցվել բնակչության նվազման վտանգը. ընդունի այդ բանում շրջակատ հանդիսացան յոթանաստնական թվականները. Մանկանց մահացության դեմ պայքարն սկսվեց առաջին անգամ Ֆրանսիայում, վորտեղից այդ շարժումն անցավ յեվրոպական մյուս պետությունները յեվ Ամերիկա: Ամենից վերջը այդ գործում հանդես յեկավ Խուսատանը:

Մյուս յերկրներում մանկանց մահացության դեմ մղված պայքարի շարժումը դիտելով, տեսնում ենք, վոր մամնակցությունն այդ պայքարի մեջ պատկանում է զլսավորապես մասնավոր յեվ հասարակական ծեռներեցության:

**Մայրության յեվ մանկության պահպանությունն այնտեղ մինչեվ այժմ ել պետական գործ չի համարվում յեվ պետության մամնակցությունն այնտեղ աննշան ե. պետությունը միայն նպաստներ ե տալիս մանկական մի քանի հաստատությունների:**

Ռուսաստանում յեվս հեղափոխությունից առաջ մայրության յեվ մանկության պահպանության բնագավառում շատ քիչ քան եր արված: Հեկտեմբերյան հեղափոխությունից հետո միայն նոր պայցառ շրջան սկսվեց: Կազմակերպությունը դրվեց խոր սոցիալական հիմքերի վրա, բարեգործության ամեն նշան դուրս վանվեց: Մայրության յեվ մանկության պահպանության կազմակերպությունը Վրաստանում յեվ Հայաստանում հարկադրված ելին ստեղծել վոչինչ չեղած տեղում: Անդրկովկասի հին

բժշկական կազմակերպության անծանոթ եր առողջապահության այդ ծեփի գործունեյություն, ուստի այդ բնագավառում վոչ մի աշխատանք չեր ել կատարվում: Ցարական ժամանակ Թիֆլոսում կար մի տուն ընկեցիկների համար. այդ տունն ավելի շուտ բաշխիչ դեր եր կատարում այդտեղից մանուկներին հանձնում ելին ստնտուներին, վոր տանեն գյուղերում պահեն. ընդամին այդ յերեխաների կրթության վրա վոչ մի հոգացողություն ու հսկողություն չկար: Ստնտուների հետ հաստատության ունեցած ամբողջ կապն այն եր միայն, վոր հաստատությունը յերեր ամիսը մի անգամ ոռնիկ եր տալիս նրանց: Ինչպես, ինչ շրջանումն եր մեծանում յերեխան,—այդ հսկողության շրջանից դուրս եր:

Մենշեվիկների ժամանակ ստեղծված եր մայրության յեվ մանկության պահպանության բարեգործական ընկերություն, վորը իր գործունեյության, ճիշտ ե—կարճ, ժամանակամիջոցում վոչ մի իրական հետեվանք չտվավ:

Մայրության յեվ Մանկության Պահպանության Բաժինը, վորին հանձնված ե այս բնագավառում ամբողջ աշխատանքը հանրապետական մասշտաբով, առաջին անգամ կազմակերպվեց 1921 թվին: Գործի նորությունը, նյութական միջոցների բացակայությունը սկզբում հնարավորություն չելին տալիս աշխատանքը ծավալելու: Այս քանին ավելանում եր շատ բժիշկների թերահավատությունն ու անտարերերությունը դեպի մայրության ու մանկության պահպանության գործը: Անշան քանակությամբ հաստատություններ կազմակերպելուց զատ, վորոնք գլխավորապես ցուցադրական բնույթ ունելին, սկզբում հարկադրված ելին բացառապես պրոպագանդային-ազիտացիոն աշխատանք կատարել, վորին ակտիվ կերպով մասնակցում ելին կին-բաժինները յեվ կինկազմակերպությունները: 1921—1922 թվի ընթացքում միմիայն Թիֆլիսում կարդացված եր ավելի քան 300 դասախոսությունն ու զեկույց:

1923-24 թվին սառույցը հալված եր: Բնակչության, կուսակցական, պրոֆեսիոնալ յեվ վարչական կազմակերպությունների կողմից վորոշ համակրական վերաբերմունք և նկատվում դեպի մայրության յեվ մանկության պահպանությունը յեվ պատրաստակամություն այդ աշխատանքը վարելու տեղերում: Առանձին համակրական վերաբերմունք, նպատակի պարզ հասկացողությունն նկատվում եր ապահովագրական կազմակերպու-

թյունների կողմից ի դեմս ապահովագրվածներին բժշկական ոգնություն ցույց տվող յենթաքամի, վորք իր աշխատանքների թվում աշխատանք եր ստանձնել նայել մոր յեվ մանկան առողջության պահպանման բնագավառում։

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս մայրության յեվ մանկության պահպանության հաստատությունների աճումը Հայաստանում յեվ Վրաստանում հիշյալ ժամանակամիջոցում։

#### Հ ա յ ա ս ա ս ա 6

	1921 թ.	1923 թ.	1924 թ.	1925 թ.
--	---------	---------	---------	---------

Կոնսուլտացիաներ	1	3	5	6
-----------------	---	---	---	---

Մսուրներ	»	»	»	»
----------	---	---	---	---

Մանկատներ	»	1	1	1
-----------	---	---	---	---

#### Վ ր ա ս ա ս ա 6

	1921 թ.	1923 թ.	1924 թ.	1925 թ.
--	---------	---------	---------	---------

Կոնսուլտացիաներ	3	9	14	26
-----------------	---	---	----	----

Մսուրներ	2	5	5	9
----------	---	---	---	---

Մանկատներ	1	2	3	3
-----------	---	---	---	---

Այս բոլոր հաստատությունները 1925 թվից պահպան են տեղական միջոցներով։ Միայն մանկատունը Հայաստանում թողնված է պետական բյուջեի վրա։

Պատրոնաժային աշխատանքը, այսինքն տանը կատարվող մանկանց հետազոտությունը առայժմ թույլ է կատարվում։ Միայն թիֆլիսում նա տարե-ցտարի բավական աճում է։ Այսպես, 1923 թվին հետազոտված է 2.138, 1924 թ.-3.401, իսկ 1925 թ.-5.631 յերեխա։

Վերև առաջ բերված աղյուսակի մեջ աչքի յե բնկում մշտական մսուրների փոքր բանակությունը յեվ մանկական ամարային մսուրների կատարյալ բացակայությունը Հայաստանում յեվ Վրաստանում։ Այս բանը բացարձում է մեզում մի կողմից արդյունաբերության թույլ զարգացումով յեվ մյուս կողմից կենցաղի առանձին պայմաններով։ Վրաստանում յեվ Հայաստանում կինն այնպիսի ակտիվ մամնակցություն չունի դաշտային աշխատանքներին, ինչպիսին տեսնում ենք Ռուսաստանում։

Բայց դրա փոխարեն կոնսուլտացիաների գործունեյությունը տարե-ցտարի աճում է։ Դրա ապացույցը հետևյալ թվերն են։

Կոնսուլտաց. յենթարկ. են 1921-22 թ. 1923 թ. 1924 թ. 1925 թ.				
Հայաստանում	6466	8227	10.160	22.523
Վրաստանում	8936	18.020	27.550	38.909

Մայրության յեվ մանկության պահպանությունը, վոր վերջերս ե միայն սկսել զարգանալ մեզնում, ստիպված է հաղթահարել իր ճամբին անհնարին խոցընդոտներ, վորոնք բղխում են բնակչության ցածր կուլտուրականությունից յեվ տնտեսական աննպատ պայմաններից։ Տեղական միջոցները փոքր են։ Նրանք նազիվ են բավկականանում գոյություն ունեցող բուժական հաստատությունները պահպանելու համար։ Առանց պետության ոժանդակության մայրության յեվ մանկության պահպանության գործը գժվար կարող է զարգանալ։ Իսկ այդ ոժանդակության կարիքը կա։ Մանավանդ այդ աշխատանքի անհրաժեշտությունը սուր կերպով զգացվում է զյուզում։ Բարեբաղդաբար մեզնում մանկան արհեստական մննդատվությունը այնքան շատ չի տարածված, ինչպես ուրիշ յերկրներում։ Այսպիսով, մանկանց բարձր մահացության վրա ազդող մի ժամկետը ըստ յերեխութին բացակայում է։ Բայց չե՞ վոր մանկան առողջությունը դեռ յեվս ապահովված չի լոկ այն բանով, վոր նա սնվում է կրծքով։ Մեր զյուզերում ամեն մի յերեխա մոր կրծքով է սնվում, սակայն մահացությունը զյուզական յերեխաների մեջ շատ բարձր է։ Դրա պատճառը մանկանց անկանոն խնամքն ու մննդառությունն է։ Գյուղական մանկանը շատ ավելի ծիծ է տրվում, բան պետք է, վորով յեվ նա ստամոքսային-աղիքային հիվանդություններ, զիսավորապես փորբուծություն և ստանում։ Բացի սրանից ծիծ հետ միասին նա ստանում է նրա համար անհամապատասխան ուրիշ ամեն տեսակ կերպուր։

Մանկանը շատ հաճախ պահում են կեղտոտ փալասների մեջ, կապկառում են պարուրների մեջ, ուշաթափության չափ որորում են որորոցի մեջ։ Նրա մարմինը շատ հազիվ է պատահում, վեր ջուր ու սապոն տեսնի, ամիսներով նրան դուրս չեն բերում թարմ ոդ յեվ նա շնչում է խրճթի ոդը, վորտեղ հաճախ մարդկանց հետ ապրում են յեվ տավարն ու թռչունները։ Յեվ ի՞նչ կա զարմանալու, վոր այսպիսի պայմաններում մանուկը լաց և լինում ոդ ու զիշեր, յեվ հուսահատ մայրը մարդու յեվ հարեվանների վախից յեվ յերեխային խղճալոց շարունակ ծիծը կոխում է նրա բերանը։ Այսպիսի խնամատարության մեջ ծիծի կաթը, վոր ամենալավ միջոցն է հիվանդության յեվ մանկան

դեմ, կորցնում ե իր գորությունը. նրա ազգեցությունը վոչչառում ե մյուս բոլոր վնասակար պայմանների շնորհիվ:

Մոր յեվ մանկան առողջության պահպանության բնագավառում աշխատելու համար գյուղական վայրերը, ինչպես տեսնում եք, բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում:

Վորովինետեվ տեղերում պակասում են նյութական միջոցները այս միանգամայն նոր գործին հատկացներու համար յեվ, մյուս կողմից, չկան բավականաչափ թվով մասնագետներ, վորոնք կարող լինելին մոտենալ այս գործին լայնորեն կազմակերպված ծեռներեցությամբ, մենք առայժմ հարկադրված ենք յեղել մայրության յեվ մանկության պահպանության աշխատանքը կապել զյուղում գործող բժշկի ընդհանուր աշխատանքի հետ։ Մրա համար մենք առաջարկել ենք հատկացնել շաբաթվամեջ մեկ որ. այդ որը կատարվում ե պրոֆիլակտիքական աշխատանք, ընդունվում են բացառապես մինչեվ 3 տարեկան յերեխաները, տեղի յե ունենում սանիտարական-լուսավորական աշխատանք։

Գեղջկուհիները նույնպես, ինչպես այդ արին բանվորուհիները, անտարակույս կզգան յեվ կզիտակցեն մայրության յեվ մանկության պահպանության գործի լայն կազմակերպման ամբողջ կարեվորությունն ու անհրաժեշտությունը յեվ Կինբաժինների ոգնությամբ ամենազերմ յեվ ակտիվ մասնակցություն կունենան հաստատությունների կազմակերպմանը։

Պետք ե հիշել, վոր մայրության յեվ մանկության պահպանության գործը հարկադրված ենք յեղել սկսել վոչնից։ Զայելով նյութական ծանր գրության, նայելով խորհրդային իշխանության մի շարք գժվարություններին, մեծ աշխատանք ե կատարված մոր յեվ մանկան առողջության պահպանության վերաբերմամբ։ Բայց, ի հարկե, ներկայումս գոյություն ունեցող այն հաստատությունների թիվը, վորոնք ծառայում են մորն ու մանկանը, շատ ել բավական չե։ Դեռ յեվս մեծ, յերկարատևի համառ աշխատանք կա կատարելու, հարկավոր են շատ միջոցներ ու ջանքեր, բայց մենք հաստատապես հավատում ենք, վոր մի յերկրում, ուր իշխանությունը գտնվում ե բանվորի յեվ զյուղացու ձեռքին, վոչ թե խոսքով, այլ գործով յեվ վոչ հեռու ապագայում լիովին կիրագործվի մայրության յեվ մանկության պահպանությունը։

## ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԵՆԱՆՈՒՄ

Մայրության յեվ մանկության պահպանությունը, իբրեւ պետական նշանակություն ունեցող գործ, Աղրբեջանի Խորհրդադաշտին հանրապետության մեջ սկսում ե զարգանալ խորհրդայնացման որից, այսինքն 1920 թվականից։ Մինչ այդ Բազմում միայն առանձին փորձեր ելին լինում հասարակականորեն արամադրված բժիշկների կողմից, վորոնք ստեղծել ելին «Մանկական մահացության դեմ կրվող ընկերություն»։ Այս ընկերությունը Քղովնայում հիմնել եր մանկական կրնառութացիա յեվ վոսկրի տուբերկուլոզվ հիվանդ յերեխաների սանատորիա, վորի գոյութունը պահպանվում եր մասնավոր բարեգործությամբ։

Մի փոքր տագնապ ապրելով 1921—22 թ., ամուր բյուջեների անցման շրջանում, մայրության յեվ մանկության պահպանության գործը սկսում ե անշեղ կերպով անել քանակով յեվ վորակով, տարեցարի ծավալելով իր լայն ընդզրկման թափը։ Ամենակարեվոր մասը—մանկական կոլտութացիաները, վորոնք մեր առաջապահ դիրքերն են յերեխանց առողջությունը պահպանելու համար, զարգանում են անսպառ թափով, ընդզրկելով ներկայումս արդյունարերական նույն իսկ այսպիսի յետամենաց անկուտներ։ Վորպիսին ե Բինաղաղին յեվ այլն։

Բազմում ներկայումս կա ընդամենը 4 կրնառութացիա 10 կաբինետով յեվ շոտով բացվելու յե դարձալ 6 կարինետ։ Կոնսուլտացիաների աշխատանքն այնքան ամրացել ե, վոր արդեն հնարավորություն ե նկատվում պարտադիր կերպով սպավորելու բոլոր ապահովագրվածների յերեխաներին մինչեվ 1½ տարեկան։ իսկ չապահովագրվածների յերեխաներին սպասավորելն առայժմ մնում է կամավոր, բայց թվերը ցույց են տալիս, թե հեռու չե ժամանակը, յերբ Բազմի կոնսուլտացիաները կմուտենան Մոսկվայի թիվը ինքնին, այն ե մինչեվ մեկ տարեկան յերեխաներին սպասավորելու 90—95 տոկոսին։

Բագվում կա բաղաքային 4 մսուր յեվ մի շարք մսուրներ ել կան տնտեսական ծեռնարկներին կից (Լենինի գործարանի, ծխախոտի գործարանների յեվ այլն): Մսուրների նկատմամբ անհրաժեշտ ե խոստովանել, վոր Բագուն յետ ե մնում մյուս արդյունաբերական կենտրոններից յեվ զիսավորապես նրա համար, վոր տնտեսական կազմակերպությունները բավարար չափով չեն մասնակցում: Ներկայումս Աղրբեջանի Պրոֆխորհրդի միջոցով բանակցություններ են տեղի ունենում, վորպեսզի տընտեսական այն որգանները, որ կանանց աշխատանք ե գործադրվում, մասնակցեն ծեռնարկներին կից գտնված մսուրների պահպանմանը:

Հին տիբրահուզակ վորբանոցի տեղ ստեղծված ե ծծկեր Մանկան մի գեղեցիկ տուն 100 վորը յեվ ընկեցիկ յերեխանների համար: Պատրոնաժի լայն գործադրությունը, այսինքն յերեխաններին վճարով բանվորական ընտանիքներին հանձնելը, կազմում ե «Տան» անհրաժեշտ լրացումը յեվ թույլ չի տալիս, վոր այդ «Տունը» չափազանց լցվի, ինչ վոր սովորաբար ամենահիվանդուս կողմն եր հանդիսանում այդպիսի հաստատությունների մեջ:

Լայն հիմքերի վրա իեղրված նայեվ ծննդաբերական ոգնությունը: Բագու բաղաքում կա հիվանդանոցներին կից յերկու ծննդաբերական բաժամունք 130 մահճակալով (նախազծված ե մահճականների թիվը հասցնել 180-ի), յուրաքանչյուր արդյունաբերական շրջանում կան ծննդաբերական բաժամունքներ մեծ կամ փոքր ծավալով:

Ներկայումս ահազին հոսանք ե նկատվում դեպի այդ բաժանմունքները, նախ, շնորհիվ ծննդաբերության բարձրացման, վոր նկատվում ե Բագվում, մյուս կողմից՝ շնորհիվ այն բանի, վոր թուրք կանանց մասսան ցնցված ե հիմքից յեվ գնում ե այդ հաստատությունները, ինչ վոր հազվադեպ յերեխույթ եր առաջ:

Յեթե Բագվի հաստատությունները իրենց վորակով ու ծավալով կարող են աջողությամբ համեմատվել Միության լավագույն արդյունաբերական բաղաքների հետ, ապա Աղրբեջանի գավառներում, պետք ե խոստովանել, մենք խիստ յետ ենք մնացել:

1924 թին Առողջապահության ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծված եր Մայրության յեվ Մանկության Պահպանության Բաժին, վորը լայն ծրագիր եր կազմել զավառներում գործելու յեվ հրավիրել եր այդ գործի համար հասարակական

կազմակերպությունների ու տեղական որգանների ուշադրությունը:

1926 թ. սկզբում մենք ունենք մանկական 5 կոնսուլտացիա զավառական բաղաբներում կաթի խոհանոցներով, ցուցահանդեսներով յեվ պատրոնաժային բույրերով: Այդ կոնսուլտացիաները կարողացել են շատ արագ զրավել թուրք կնոջ վատահություննը յեվ միացընել են իրենց շուրջը մեծ թվով մայրերի, վորոնց մեջ սիստեմատիկական առողջապահական դաստիրական յեվ կուլտուր-կրթական աշխատանք ե տարվում: Բացված ե յերեխանց հիվանդանոց Գանգայում 30 մահճակալով, վորոնցից 10-ը ծծկեր մանուկների համար, նույն տեղում կանանց ակումբին կից բացված ե մասր 20 մանուկների համար: Սարբավորված են մի քանի ծննդաբերական բաժանմունքներ զավառական հիվանդանոցներին կից, զյուղական մանկաբարձուների թիվը 1924—25 թվի 25-ից հասցրած ե 1925—26 թ. բյուջետային տարում 75-ի: Այս բոլոր հաստատություններն աջողվեց իրագործել բացառապես շնորհիվ հասարակական կազմակերպությունների յեվ Աղրբեջանի Կենտրոնական կոմիսիային լայն ոժանդակության, մանավանդ վերջինի, վորը մեծ ուշադրություն յեվ նյութական շատ միջոցներ ընձեռեց Մայրության յեվ Մանկության Պահպանությանը:

Այս ծրագրի զիսավոր մոմենտները հետեւյաներն են.

Գյուղում Մայրության յեվ Մանկության պահպանության համար կատարվող աշխատանքի հիմքը կազմում ե ծննդաբերական ոգնությունը: Սրա շուրջը, իրեկ նախնական բջիջ, պետք ե խմբվի ամրող հասարակական աշխատանքը, զյուղի կենդանի յեվ կուլտուրական ույժերի ամրող ինքնազործունեյությունը: Ավելի խոշոր զյուղերում (գայրա-զործկոմ) այդ կետը պիտի հանդիսանալ հիվանդանոցի ծննդաբերական բաժանմունքը, մյուս զյուղերում այդ բջիջը պիտի լինեն զավառամասային մանկաբարձուները, բայց վոչ առաջվագ գիմստավային տիպի, վորոնք միանգամայն անտարբեր եյին յեվ իրենց աշխատանքը սահմանափակում եյին բացառապես ծննդաբերական ոգնությամբ, այլ հասարակական աշխատավորուհիները, վորոնք պետք ե լինեն թե՛ մանկաբարձուի, թե մանկության յեվ թե պատրոնաժային բույրը: Սրանց շուրջը համախմբվում են մայրության յեվ մանկության պահպանության զյուղական հանձնաժողովները, վորքան վոր այս նախնական բջիջի ազդեցությունն ամրանա յեվ

ուժեղանա, այնքան նա իր շուրջը պիտի ստեղծի մի շարք հաստատություններ—մանկանց խնամատարության փոքրիկ ցուցահանդես, մանկական մասունքներ, պարզ կրնառուտացիաներ յեվ այլն,—բոլորը գյուղական մասսայի յեվ գյուղական հասարակական կազմակերպությունների անող ինքնազործունեցության ու ակտիվության հիման վրա:

Այս ծրագիրն իրականացնելու համար այս տարի ծննդարերական բաժանմունքներ են բացվում բոլոր գավառական յեվ մի քանի գյուղական հիվանդանոցներին կից. կրնառուտացիաների թիվը գավառական բաղադրներում հասնում է 8-ի. զավառամասային մանկաբարձունքների թիվը հասնելու յև 125-ի. Այս արդեն մեծ նվաճում ե հանդիսանում յեվ հույս ե տալիս, վոր ծրագրի իրազործումը կշարունակվի անշեղ յեվ անող թափով:

Դարձյալ այս տարի մենք ծեռնարկում ենք մասունք բանալու այն ծեռնարկներին կից, ուր բանում են կանայք, —Գանցայում, Նուխում, Լեռնային Ղարաբաղում յեվ Նախիջևանի ինքնավար շրջանում:

Այս ծրագրի իրազործումը հանդիպում ե, ի հարկե, ամենից առաջ ֆինանսական դժվարությունների: Բայց դրանք չեն ամենից ավելի ծանր դժվարությունները:

Ամենից ավելի դժվարը, վոր շատ անգամ ե վիճել աշխատանքը, դա կենդանի ստեղծագործ ույժերի ծայր աստիճան սահմանափակ թիվն ե. չկան բավարար չափով հասարակական գործիչ-բժիշկներ, բույրեր, մանկաբարձունքներ յեվ առհասարակ կուլտուրական աշխատավորներ, վորոնց ծարավի յև Աղրբեջանի գյուղը:

Յեվ ահա թե ինչու մերծակա վեցամյակի համար Մայրության յեվ Մանկության Պահպանության Բաժնի կարեվորագույն իննիբեր հանդիսանում ե վորակյալ աշխատավորներ պատրաստելը տեղական բնակչությունից:

Այս աշխատանքին գլուխ ե անցած Աղրբեջանի Պետական Պեղիստրիկական Խնատիտուտը Բագվում իր գեղեցիկ հիվանդանոցով, վոր հանդիսանում ե մեր գիտական յեվ կրթական կենուրոնը: Բացի գիտական յեվ հետազոտական մեծ աշխատանքից, վոր կատարվում ե այնտեղ, նա պատրաստում ե բժիշկներ, մանկության բույրեր յեվ դայակներ գավառներում գործնական աշխատանք տանելու համար:

Հետո, Բագվում կա մանկաբարձական տեխնիկում ողբա-

կան յեվ թուրքական բաժանմունքներով. ո.ուսական բաժանմունքն արդեն տվել ե մի շարք ընթացավարտներ, թուրքական բաժանմունքն այս տարի տվալ իր առաջին ընթացավարտները—մոտ 20 թրունի-մանկաբարձներ, վորոնք Աշխատավորունիների յեվ Գեղջկունիների Բաժնի վորոշմամբ կուլարկվեն գավառները:

Վերջապես, Գանջայում 1925 թվից գործում են թուրքական մանկաբարձական դասընթացներ, վորոնց 1926—27 թվից մտադրություն կա վերածելու մանկաբարձական տեխնիկումի:

Աշխատավորունիների Միջազգային Որն այս տարի գործադիպում ե Աղրբեջանի Սև հանրապետության մեջ առաջին անգամ «Մայրության յեվ Մանկության Պահպանության Շաբաթ» անկացնելուն: Այդ «Շաբաթը» պետք ե տա մեր աշխատանքին այն մասայական հասարակական աջակցությունը, առանց վորի անհնարին ե վորեվե աջողություն մեր աշխատանքի մեջ:

**Մոլգավսկի**

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍՑՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՄԱԴԻՔԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ ԿԵՅ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԿԵՆՅԱԾՈՂԸ ԲՈՐՆԱՎՈՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հարկավո՞ր են արդյոք առանձին կոմիտեներ աշխատավոր կանանց կենցաղը բարելավելու համար, յեվ յեթե հարկավոր են, ապա ինչո՞ւ Մի՞թե կնոջ կենցաղի մեջ կա այնպիսի մի առանձնահատուկ բան, վորի դեմ պետք ե առանձին պայքարու աշխատանք վարել: Մյս բոլոր հարցերին կարելի յե աալ միայն մեկ յեվ միայն դրական պատասխան: Կապիտալիստական աշխարհի ժառանգության հետ մենք ստացել ենք մի այլանդակ կենցաղ իր բոլոր արտահայտություններով յեվ ամենաայլանդակը, վոր անցել ե մեզ հիշյալ ժառանգության հետ, այդ կնոջ կենցաղն ե, «վորովինել մարդկային ցեղի կանացի կեսը կապիտալիզմի իրավակարգում ննչված եր կրկնակի» (Լենին):

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը դուրս կորցեց կապիտալիստական իրավակարգի բոլոր արմատները, յեվ սկսվեց հաղթող պրոլետարիատի աշխատանքը նոր իրավակարգ ստեղծելու համար: Յեվ ինչպես հնի կործանման, այնպես յեվ նորի ստեղծման գործին պիտի մասնակցեն աշխատավոր մասսաների բոլոր ույժերը, վորոնք պետք ե իրենց ծեռքն առնեն բաղադրականությունը, նոր կյանքի շինարարությունը: Բայց չե՞ վոր, ինչպես Վ. Ի. Լենինն ե ասել, «մասսաներին բաղադրականության մեջ բաշել անկարելի յե առանց կնոջը բաղադրականության մեջ քաշելու»: Աւստի յեվ նոր կենցաղը կստեղծվի միայն այն ժամանակ, յերբ բոլոր աշխատավոր մասսաները, դրանց թվում յեվ կանայք, առաջ կրաշվեն մասնակցելու բաղադրականությանը յեվ կյանքի շինարարությանը: Բայց կնոջն այդ շինարարության մեջ առաջ բաշելն անհամեմատ ավելի դժվար ե, բան տղամարդուն, վորովինել սոցիալական հին պայմանների ժառանգությունը — հին կենցաղն իր բոլոր մազիլներով ամենից ավելի ուժգնորեն խրվել ե հենց կնոջ հոգեբանության մեջ:

Խորհրդային իշխանությունը կնոջ համար արել ե այն ամենը՝ ինչ վոր հիմնական ե, այն ամենը՝ ինչ վոր եյական ե. նա միանգամայն հավասարեցրել ե կնոջ իրավունքները տղամարդու իրավունքներին: Բայց ուրիշ բան ե իրավունքներ ստանալ յեվ ուրիշ բան՝ ննարավորաթյուն ունենալ այդ իրավունքներն ոգտագործելու: Կյանքի փորձերը ցույց տվին, վոր կանանց մեծամանությունն այդ կարողությունն ու հնարավորությունը գեռ յեվս ըունի: Կանանց հասարակական-քաղաքական մակարդակը բարձրացնելու համար նրանց մեջ կատարված աշխատանքի ժամանակ առանձին ուժով սկսեցին դրսեկորվել կանանց կյանքն այլանդակող հին փոտած կենցաղի հետքերը: Աշխատավորուհիների յեվ Գեղջկուհիների Բաժիններում կուտակվել եյին ամեն տեսակ խնդրագրեր, վորոնցով խնդրվում եր նյութական ոժանդակություն ցույց տալ կամ մի կնոջ, վորին ամուսինը թողել եր առանց վորեվե ապրուստի յեվ յերեխան ծեռքին, կամ մի կնոջ, վոր ծգել եր զազան ամուսնուն յեվ ուզում եր մատնել մի նոր անկախ աշխատավորական կյանք, կամ մի կնոջ, վոր ուժապառ եր լինում ընտանեկան կյանքի բեռան տակ, կամ մի աղջկա, համարյա յերեխայի, վորին ծնողները մարդու եյին տվել, ավելի ճիշտը՝ ծախել եյին տղամարդու վրա, յեվ այլն, յեվ այլն: Աշխատավորուհիներին նյութական ոժանդակություն ցույց տալու յեվ Աշխատավորուհու ու Գեղջկուհու Բաժիններին այդ աշխատանքից թեթեվացնելու նպատակով Համամիության կոմ. Կուս. (թ) Անդրկ. Կենտ. Կոմիտեին կից Աշխատավորուհու ու Գեղջկուհու Բաժինը միտք եր նղացել հանրապետական կենտկոմներին կից ստեղծելու աշխատավոր կանանց կենցաղը բարեկավող կոմիտեներ: Այն ժամանակ իսկ մշակված կանոնադրության համաձայն, այդ կոմիտեների մեջ պիտի մտնելին ներկայացնեցիներ բոլոր շահագրդության վարչությունների յեվ որգանների կողմից:

Առաջին անգամ 1922 թիվի վերջում այդպիսի կոմիտե կազմեկերպվեց Վրաստանի կենտկոմին կից, 1923 թ. հունվարին—Ադրբեջանի կենտկոմին կից, իսկ մի քիչ ուշ նույն թվին—Հայաստանի կենտկոմին կից: Թե վորքան կենտկոմն այդ կոմիտեները, կարելի յե դատել հենց թեկուզ միայն այն բանից, վոր նրանք, նույնիսկ չնայելով միջոցների բացակայության, վոչ միայն չսմբեցին, այլ յեվ ավելի ու ավելի ծավալեցին իրենց

գործունեյությունը, ընդարձակելով սահմանները յև ընդգրկելով կամքաբարեր:

Անդրկովկասյան հանրապետությունների այս կամ այն կնևտկոմին կից գոյություն ունեցող յուրաքանչյուր կոմիտե առանձին նորանարություն ցուցահանեց ամոքելու համար այն կարիքները, փորոնք բնորոշ են տվյալ հանրապետության համար: Այսպիս, Վրաստանի կենտրոնին կից գտնվող Կոմիտեն ամենից ավելի յեռանդուն գործունեցություն ցուցահանեց Թիֆլիսում կուտակված գործազուրկներին ոգնելու համար, Աղրբեջանի կոմիտեն իրավաբանական ոգնություն եր ցույց տալիս թուրք կնոք, Հայաստանի Կոմիտեն ոգնում եր խնամազուրկներին:

Աշխատավոր կանանց կենցաղը բարեկավող կոմիտեների ներկայացուցիչների անդրկովկասյան առաջին խորհրդակցությունը, վոր գումարված եր Մնդրկենակործկոմին ծեռներեցությամբ 1925 թ. նոյեմբերի 23-ին, հնարավորություն տվավ, թեյևի վոր լրիվ կազմել կատարված աշխատանքի ընդհանուր հաշվինարդարը:

Վրաստանի կենտրոնին կից գտնվող Կոմիտեն կազմկերպեց «Ժամանակավոր կացարան», փորին կից կան կարուծելի դպրոց, ջութականց, զիսարկի, խաղալիքների, գորգագործական, կարկատանի յեվ ուրիշ արձնատանոցներ, ուր աշխատում ե կանանց կոլլեկտիվը. կացարանում ամսական ապրում վաճ սպասավորություն կազմակերպելու համար հիմնարկներին ները մարքելու համար: Այս աշխատանքով զբաղվում ե 214 15-ից մինչեւ 28 ուրիշ, Կոմիտեն բաց ե արել կաֆե-հրուշական հիմնարկների մեջ ծառայելու համար ուղարկել ե 200 հոգի: Նական խորհրդներ ե տալիս կնոք: Կանանց ուղարկելով հառովնություն ել ե ցույց տալիս նրանց: Ամեն որ Կոմիտե յեն մասշտաբով, ուր ամենից ավելի կարիք եր թիֆմիայն 1925 թվի վերջը ծրագրվեց աշխատանք կատարելու հանրապետության մյուս կենտրոններում յեվ:

Աղրբեջանի աշխատավոր կանանց կենցաղը բարեկավոր Կոմիտեի աշխատանքի մեջ առաջին տեղը բռնում ե իրավաբանական ոգնությունը: Բոնի ամուսնությունները, մի աղջկա տեղ ուրիշ աղջիկ մարդու տալը, փորբանասակ աղջիկներին ամուսնացնելը, բազմակությունը—ահա Սրեմելը կնոջ կենցաղի այն ամենացավոտ կողմերը, փորոնց դեմ հարկադրված եր պայքար մզել Կոմիտեն, վորը պաշտպանների կողեզիայի անդամների ամենորյա հերթապահություն եր սահմանել: Կոմիտեին կից կան արմատանցներ մանածի, ստվարաթղթի արկղիկների, գուլպայի յեվ այն, ուր աշխատում են Կոմիտեին դիմող կանայք, ուրիշներն ուղարկվում են որավարձով աշխատելու (այգեքաղի, ծկան արդյունաբանները յեվ այն), վոմանց ել ամելի մշտական աշխատանք ե արփում (տան սպասավորություն, զրատենյակային աշխատանք, մանկավարժական գործ): Առողջապահության բնագավառում Աղրբեջանի Կոմիտեն ոգնությունը ցույց եր տալիս Առժողովումի հետ միասին, վորը Կոմիտեի ողարկած կանանց իր հերթին ուղարկում եր համապատասխան հիմնարկներ բժշկվելու համար (արախումա, ծննդաբերական ոգնություն, աբորտներ յեվ այն): Աղրբեջանի Կոմիտեն համախել են 1925 թվին ընդունուր առմամբ 25,000 հոգի:

Աղրբեջանի Կոմիտեի աշխատանքը ցիր սահմանափակվում միայն Բագու բաղարով: 1925 թվի ապրիլից Կոմիտեներ ելին կազմակերպված խոշոր կենտրոններում—Գանձայում, Ղազախում, Նորխում, Չուրայում, Աղդաշում, Նախիջևանի ինքնավար հանրապետության մեջ յեվ Լեռնային Ղարաբաղում, յեվ արդեն նոյն տարվա նոյեմբերի վերջը Կոմիտեի այդ բաժանմունքների ոգնությանը դիմող կանանց թիվը հասնում եր 10,000-ի:

Հայաստանի կենտրոնի կոմիտեն կից գործող Կոմիտեն իր աշխատանքը ծառայում եր վոր միայն Յերեվանում, այլ յեվ հանրապետական մասշտաբով. Անդինականում, Լոռում, Նոր-Յայազիստում, Դարալազյազում, Զանգեզուրում յեվ Ելիլիջանում բացված ելին կարի, գուլպայի, լվացքի յեվ գորզի արմատանցների արտելներ: Բացի սրանից Հայաստանի Կոմիտեն աշխատանք եր վարում խնամազուրկների կենցաղը բարեկավելու համար, կազմակերպված ելին խնամազուրկների յերեխանների համար մանկատներ, դպրոցներ յեվ ժողով, Կրթության Բաժնի հետ միասին՝ պրոֆեսիոնիբարական դասընթացներ:

Հնդհանուր առմամբ սրանք ելին այն աշխատանքները, վոր վարում ելին հանրապետական կենտղործկոմներին կից գտնվող կոմիտեները: Այստեղ մի թիզ կանգ առնենք այն խնդրի վրա, թե ինչ միջոցներով, ինչ ույժերով ելին կատարվում այդ աշխատանքը: Զարմանալ միայն կարելի յե, վոր՝ շատ սահմանափակ միջոցներ ունենալով իսկ յերբեմն յեկ միջոցներից միանգամայն զուրկ լինելով հանդերձ, աշխատավոր կանանց կենցաղը բարելավող կոմիտեները կարողացել են այդպիսի աշխատանքներ կատարել: Հայաստանի կենտղործկոմին կից գործող կոմիտեն սկսած 1923 թվից մինչեվ 1925 թվի վերջը չուներ բառիս բուն նշանակությամբ վոչ մի միջոց, վոչ մի ույժ, վոչ մի վճարովի աշխատող ամբողջ աշխատանքը վարում եր Կենտրաժինն իր ույժերով: Ազրբեջանի կոմիտեն ուներ մի պատասխանատու աշխատավոր, վորին վճարում եր Կենտղործկոմը, յեկ ամսական 30 ռ. դիվանական ծախսերի համար: Ահա այն հիմնական (յեթե չնաշվենք 3 տարվա ընթացքում Ֆինժողկոմից ստացած 3.000 ռուբլին) միջոցներն ու ույժերը, վորոնցով կոմիտեն կատարել եր աշխատանքը: Վրաստանի կենտղործկոմին կից գործող կոմիտեն ստանում եր 450-ական ռուբլի ամսական: ուրիշ միջոցներ (չնաշվելով կոմմունալ բանկից փոխարինաբար վերցրած 3.000 ռ.) Վրաստանի կոմիտեն չուներ:

Ահա թե ինչու հանրապետական կենտղործկոմներին կից աշխատավոր կանանց կենցաղը բարելավող կոմիտեների միջոցնանում եր իբրեւ ամենահրատապ յեկ կենսական խնդիր: Յեկ իրոք, կարելի յե միթե աշխատանք ծավալել առանց միջոցների: Կոլլեկտիվների յեկ ի՞նչ կազմակերպությունների մասին ի խոր լինել: Ահա թե ինչու կոմիտեների մասին տիպար կանոնադրություն մշակելիս խորհրդակցության մեջ հանդիսանում եր կարելի յե միթե աշխատանք ծավալել առանց միջոցների: Կարող ե խոր լինել: Ահա թե ինչու կոմիտեների մասին տիպար կանոնադրություն մշակելիս խորհրդակցությունը գլխավոր տեղի եր միջոցներին վերաբերյալ կետին: Կարելի յե կատարելավես վատահորեն ասել, վոր մեջ տեղից վերացնելով այս հիմնական պակասը, կոմիտեները նեշտությամբ կվերացնեն աշխատանքը խոշընդոտող մյոււս թերություններն յեկա, վորոնց թվին վերաբերում են անդրկովկասյան խորհրդակցության մատնանշած յերբեմն անբավարար կապը այնպիսի վարչությունների հետ, ինչպիսիք են Արդարադատության, Լուսավորության, Առողջապահության, Սոցիալիական ապահովության ժողկումատները յեկ Պրոֆխորհուրդը:

Կանգ չառնելով նոր կանոնադրության իրազործման յեղանակների խնդրի վրա, մանավանդ վոր, համաձայն նույն այդ կանոնադրության, այդ բանը յուրաքանչյուր կոմիտեի: Կողմից կթելադրվի առանձին հրահանգի ծեվով, մի բանի խոսք կասենք այդ աշխատանքի հեռանկարների մասին: Ի՞նչ պիտի անեն առաջին հերթին կոմիտեները, վորպեսզի իրապես նպատած լինեն կանանց կենցաղը բարելավելու խնդրի լուծմանը: Ի՞նչպէս յեկ ի՞նչ ուղղությամբ պիտի վարեն նրանք իրենց աշխատանքը, վորպեսզի մի կողմից չմտնեն զանազան վարչությունների սահմանները յեկ մյոււս կողմից մարդասիրական հաստատություն չդառնան: Կոմիտեների առջեկ դրված խոնդիրների հիմքը կազմում ե կանանց տնտեսական յեկ կենցաղյին ազատագրումն:

Տնից գուրս աշխատող կնոջ տնտեսական վիճակը վրչնչով չի տարբերվում աղամարդու վիճակից: աշխատավարձի, արձակուրդների, գործազրկության, սոցիալական ապահովության յեկ այլ նման խնդիրները լուծվում են խորհրդային որենքության ընդհանուր ծավալով, ըստ վորում նկատի յեն առներվում կանանց աշխատանքի բոլոր առանձնահատուկ պայմանները: Այդպիս չե, սակայն, այն կնոջ վիճակը, վորի աշխատանքը կենտրոնացած և ամուսնու ընտանիքի մեջ: Ամուսնու բաժանվելով, կինը մնում է անզործ, առանց ապրումտի միջոցի, վորովհետեւ ամուսինը, ըստ մեր որենքների, պարտավոր չե ապահովել բաժանված աշխատունակ կնոջը:

Կամ վերցնենք մի ուրիշ դեպք, վոր տեղի յե ունեցել հենց այս տարբա հունվարին: Մի աղջիկ ապրում եր ամուսնու հետ ամուսինը, վարակելով նրան սիֆիլիսով, մի բանի ամսից հետո վրևել եր նոր դրության մեջ: Դատարանը վճռեց պարտավոր բենել ամուսնուն վիճակելու կնոջը այն մի բանի ամսվա համար, վորոնց ընթացքում կինը ծառայել է նրան, վորովհետեւ վաղիկը, վորոնց ընթացքում կինը ծառայել է նրան, վորովհետեւ վաղիկը: Ի՞նչ միջոցներ ունի նա բժշկվելու համար իր հիվանդությունից: Ի՞նչպէս պիտի մեծացնի, կրթի իր ամար իր հիվանդությունից: Ի՞նչ կարող ե անել առաջինի կամ ապագա յերեխային: Ի՞նչ կարող առաջինի կանանցից յուրաքանչյուր զերկորդի զրության մեջ ընկնող կանանցից յուրաքանչյուրը: Վո՞րքան ժամանակ պիտի թափառեն նրանք գործ զրարկը: Վո՞րքան ոգնության համար: Ո՞վ պիտի ոգնության համար նրանց այդպիսի համար: Պո՞վ պիտի ոգնության պիտի համար այդպիսի համար ե, ոգնության պիտի համար:

վորումիների այն կոմիտեները, վորոնց շուրջը խմբվում են հարյուրափոք այդպիսի կանայք: Կոմիտեները պետք է նրանց ցույց տան իրավարանական ոգնություն, հիվանդներին յեվ ծննդականներին ողարկեն և ուժողմտի հիմնարկները, ուր նրանց ցույց կորմի համապատասխան ոգնություն: Կոմիտեները իրենց շուրջը խմբվող կանացից պետք է ստեղծեն կոլլեկտիվներ յեվ արտեմեներ, պետք և ստեղծեն նրանց համար արհեստանոցներ, պետք և զործի դնեն նրանց: Զարիքներից մեկը, վորոնը արգելը են լինում կնոջն առաջ գնալու, այդ նրա աշխատանքի ցածր վորակն ե: Կոմիտեի ամենից ամելի ելական խնդիրը պիտի լինի Աշխատողկոմատի, Պրոֆխորհրդի, Լուսադողկոմատի որգանների նետ միասին ստեղծել գասընթացներ պատրաստելու յեվ վերապատրաստելու կնոջը նրա աշխատանքի վորակը բարձրացնելու համար:

Կենցաղի բնագավառում կոմիտեները ահազին գործ ունեն կատարելու:

Վերջնենք տանը, բնուանիքի մեջ, թե նրանից դուրս աշխատող կնոջը,—թե մեկը, թե մյուս դեպքում նրա կյանքի պայմանները մի ամբողջ նեղափակություն են պահպանում: Կարո՞ղ ե արդյոք կինը բայցել տղամարդու նետ հավասար գծով, յերբ մտահոգությունը խոհանոցի, յերեխայի պարուրների, առհասարակ տնտեսության մասին ամբողջովին ծանրացած ե նրա վրա, խիելով նրա թե ույժերը, թե ժամանակը, թե սերն ու ընդունակությունը յուրացնելու այն նորը, վորայնական տիրաբար ներս և խուժում կյանքը:—Վոչ, չի կարող: Ուրեմն ի՞նչ միջոց կա այս դրությունից յեներու: Միջոցն այն ե, վոր կնոջը պետք և ազատել այդ աշխատանքներից: Յեվ այս բնագավառում կոմիտեները կարող են խոշոր դեր խաղալ նպաստելով կազմակերպելու հասարակական հաշարաններ, լվացքարաններ, մատրներ յեվ այլն:

Կոմիտեների այսպիսի աշխատանքը կարո՞ղ է արդյոք նպաստել, վոր կանայք առաջ քաշվեն սոցիալիստական շինարարության: Դրանով կբարելավվի՝ արդյոք նրանց տնտեսական յեվ կենցաղային վիճակը: Այդ բանը նախապայման կրտսեղծի՝ արդյոք նրանց հասարակական-քաղաքական աշխատանքի բաշելու համար: Ի հարկե, այո: Յեվ բանի վոր այդ այդպես ե, ապա աշխատավոր կանանց կենցաղը բարելավող

կոմիտեները կողմեն կյանքի մեջ մարմին դարձնելու վ. և. Եենիի ավանդներից մեկը, այն ե՝ «Գլխավորը, հիմնականը բոլշևիզմի յեվ ռուսական Հոկտեմբերյան հեղափոխության մեջ այն ե, վոր պետք է քաղաքականության մեջ բաշել հենց նրանց, վորոնք ամենից ամելի ճնշված են յեղել կապիտալիզմի ժամանակ»:

#### Ա. Շիռկովա-Կայուժնայա

## ԱԼԻ-ԲԱՅՐԱՄՈՎԻ ԱՆՎԱՆ ԱԿՈՒՄԲԸ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ

Անդրկովկասի Կինքաժինների աշխատանքների մեջ ակումբը ներկայանում է իրեվլ զվարապոր ծեվ յեվ մեթոդ թրքունիների յեվ յետամնաց կանանց մասսաների մեջ աշխատանք տանելու տեսակետից:

Ակումբը — դա կոմմունիստական դաստիարակության ոջախն է:

Յերբ ծեվակերպվում եր ակումբի խնդիրը, նա պարզ յեվ վորոշակի բղխում եր տեղական կենցաղային պայմաններից, յեվ կինքաժինը նրան այսպես եր մոտենում. «Ակումբ-կոմմունայի միջոցով ոգնել թուրք կնոջը հասկանալու, թե ինչ և կոմմունիզմը. Մշակել միանգամայն զիտակից աշխատավորների յեվ պայքարողների խումբ թուրք կանանց միջից»:

Ակումբը պետք է իրենից ներկայացնի յուրատեսակ լաբորատորիա—աշխատանքները կանոնավոր տանելու յեվ կազմակերպելու տեղ: «Այդտեղ թուրք կնոջը կազմակերպելու միջոցով, ուսումնասիրելով նրա հոգեբանությունը, զործադրելով այս կամ այն անհրաժեշտ փորձերը, ոգնել նրան գտնելու ուղիղ ծեվերն ու մեթոդները Արեվելքի խորհրդային կանանց մեջ աշխատանքներ տանելու միջոցները»:

Թե ինչպես են այս խնդիրները կիրառվել կյանքում, այս բանի որինակ կարող է ծառայել Բազկի թուրք-բանվորունիների կինտրոնական «Ալի-Բայրամովի» անվան ակումբը:

Ալի-Բայրամովի ակումբը կազմակերպվել է 1920 թ.: Նրա պատմությունը—դա այն է, թե ինչպես դանդաղ կերպով թուրք կինը Խորհրդային իշխանության կենարար արեվի տակ աստիճանաբար վերածնվեց, դառնալով Խորհրդային պետության հավասարագոր անդամ:

Ալի-Բայրամովի ակումբի կազմակերպման ըովելին Խորհրդային իշխանությունը Ազբեզանում իր առաջին քայլերն եր անում: Թուրք կանանց մասսան դեռ յեփս նրա անմիջական ազդեցության տակ չեր գտնվում:

Թուրքը կինը իր յերկրի դաժան սովորություններին կպած, հին կենցաղի մասցորդների կրոնական նախապաշտումներով ու տղիտության ցանցով պատահ, դեռ դուրս չեկած միջնադարյան բռնության ճնշում-հալածանքից, պահանջում եր, վոր իրեն այլ կերպ մոտենան, հաշվի առնեն իր նվաճումները, իբրեւ հասարակական աշխատավորունու:

Այդ այլ կերպ մոտեցումը արտահայտվեց նրանով, վոր կազմակերպվեցին ընդհանրապես կանանց ակումբներ յեվ մասնավորապես Ալի-Բայրամովի ակումբը:

Ալի-Բայրամովի ակումբի կազմակերպման միջոցին նրա շուրջը համախմբվեց թուրք կանանց մի փոքրիկ խմբակ, Նրա առաջին քայլերը գերծ չեցին սխալներից, վորոնք բղխում եյին միջավայրի կյանքի պայմաններից, վորապիսիր են—գործի նոր լինելը, աշխատանքի ընդհանուր պլանի բացակայությունը, Բազկի կինքաժմնի թերի ղեկավարությունը, վորին նա յենթարկվում եր, յեվ վուշ ցանկալի ելեմնենուների մասնակցությունը: (Մասնակցում եյին բուրժուազիան յեվ մեշշանական ցրջաններից թուրք կանայք):

1921 թվի փետրվարի 20-ին Ազբեզանի Կոմկուսի (թ) Կենտրոնական Կոմիտեի Կազմակերպիչ Բյուրոյի վորոշմամբ թուրք-աշխատավորունիների կինտրոնական ակումբն անցնում է Կենտրոնական մարմնի (ՄՊ) հսկողությանը «ատեղծելու նրանից որինակելի ակումբ շրջանների յեվ զավառների համար»:

Այս մոմենտից ել սկսվում է նրա անշեղ աճումը: Ակումբին հատկացվում է համապատասխան շենք (մեծ տուն, վորը յենթարկվում է հիմնական բարենորոգման): Ակումբը մաքրվում է բուրժուազիան ելեմնենուներից, թողնելով հիմնական կորիզը 70 հոգի թուրք աշխատավորունիներից յեվ չքայլոր կանանցից, վորոնք սկսում են սիստեմատիկ աշխատանք: Չնայելով, վոր քանակով փոքրանում է ակումբի կազմը, բայց վորակով բարձրանում է:

Ակումբը գծում է իր աշխատանքի հիմնական պլանը յեվ կազմակերպում հետևյալ սեկցիաները. — կուտուր-կրթական, առողջապահական, արտադրողական:

1922 թվի սկզբին Կենտրոնական ակումբին կից արդեն կային կարուծելի արհեստանոց 25 հոգու համար (վորոնք հանդիսանում եյին իբրեւ լավ ազիտատորներ թրքունիներին գեափ ակումբը գործում), ճաշարան, մանկապարտեզ, 3 հասակումբ գրավելու գործում:

